European Training Foundation

ՄԿՈՒ որակի ապահովման ETF ֆորում – գործընկերային այց Հայաստան

Quality Assurance Forum

Երևան, Հայաստան, մայիսի 21-23, 2024թ.

Սույն տեքստը անգլերեն զեկույցի թարգմանությունն է:

Սույն զեկույցը ներառում է գործընկերային այցի մասնակիցների կարծիքները և կարող է չհամընկնել Եվրոպական կրթական հիմնադրամի (ETF) կամ Եվրոպական միության (ԵՄ) կառույցների տեսակետներին:

ԱՄՓՈՓՈՒՄ

Սույն թվականի մայիսի 21-23-ը Երևանում կայացած մասնագիտական կրթության և ուսուցման որակի ապահովման ETF ֆորումը նվիրված է եղել գործատուների մասնակցությամբ ձևավորող գնահատման որակի ապահովմանը: Գործընկերային այցը հյուրընկալել է Հայաստանի Հանրապետության «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամը (ՈԱԱԿ):

ՄԿՈՒ որակի ապահովման ֆորումը գործարկվել է 2017թ.: Ֆորումը միջազգային համագործակցության նախաձեռնություն է ՄԿՈՒ հաստատությունների որակի ապահովման գործընթացներ իրականացնող ETF անդամ ազգային կառույցների միջև, որոնք ներկայացնում են Հարավային և Արևելյան Միջերկրածովյան երկրները, Հարավարևելյան Եվրոպան, Թուրքիան, Արևելյան գործընկերության երկրները: ETF ֆորումի անդամները համագործակցում են մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈՒ) որակի ապահովման բարելավման ուղղությամբ՝ հավաքելով գիտելիք և փորձ, դիտարկելով ազգային մակարդակով որակի ապահովման (ՈԱ) զարգացումները և կազմելով համապատասխան զեկույցներ: Մասնակցում են նաև համատեղ ծրագրերի, այդ թվում՝ գործընկերային այցերի, զարգացնում ու տարածում են լավագույն փորձը:

Ֆորումի շրջանակում տեղի ունեցող գործընկերային այցերն առաջնորդվում են ՄԿՈՒ որակի ապահովման ETF ֆորումի մեթոդաբանությամբ: Համաձայն դրա՝ հյուրընկալող երկիրը դիմում է արտաքին գործընկերներին՝ ՄԿՈՒ քաղաքականության գնահատման համար ընտրված ոլորտում ՈԱ արդյունավետության վերաբերյալ հետադարձ կապ ստանալու նպատակով:

Հայաստանի կողմից կազմակերպված գործընկերային այցին մասնակցել են որակի ապահովման ETF ֆորումի անդամներ (արտաքին գործընկերներ) Ալբանիայից, Վրաստանից, Իսրայելից, Հորդանանից, Կոսովոյից[1], Չեռնոգորիայից, Հյուսիսային Մակեդոնիայից և Սերբիայից: ETF–ը համակարգել է ընդհանուր գործընթացը և ապահովել տարվող աշխատանքների ու մեթոդաբանության միջև համապատասխանությունը:

Գործընկերային այցի նախապատրաստական փուլում ՈԱԱԿ-ը գործընկերներին ներկայացրել է մանրամասն համատեքստային տեղեկատվություն հայաստանյան ՄԿՈՒ և որակի ապահովման համակարգերի վերաբերյալ: Որպես որակի ապահովման մարմին՝ ՈԱԱԿ-ը շեշտադրել է որակի արտաքին ապահվման ազդեցությունը ՄԿՈՒ հաստատություններում իրականացվող զբաղվածությանը միտված ձևավորող գնահատման վրա: ՈԱԱԿ-ն ընդգծել է այս գործընթացների կարևորությունը ՄԿՈՒ շրջանավարտների կարողությունների արդիականացման և զբաղվածության ապահովման տեսանկյունից:

Միջոցառման առաջին երկու օրերի ընթացքում գործընկերները հանդիպում–քննարկումներ են ունեցել ՀՀ–ում ՄԿՈՒ ոլորտի բոլոր հիմնական դերակատարների հետ: Նրանց թվում են Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (ԿԳՄՄՆ), Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային կենտրոնը (ՄԿՈՒԶԱԿ), Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, Էկոնոմիկայի նախարարությունը, գործատուների ներկայացուցիչները, ՄԿՈՒ հաստատությունների արտաքին գնահատմամբ զբաղվող փորձագետները, դասախոսները, գործատու–դասախոսները, ՄԿՈՒ հաստատությունների տնօրենները, փոխտնօրենները և ուսանողները: Այս շփումները հնարավորություն են տվել ավելի խորը հասկանալ ձևավորող գնահատման և դրանց որակի ապահովման գործընթացները:

Միջոցառման երրորդ օրը արտաքին գործընկերներն իրենց բանավոր արձագանքն են ներկայացրել հյուրընկալող կողմին: Գործընկերները նշել են, որ ՈԱԱԿ–ը ՄԿՈՒ հաստատությունների համար ներդրել է համապարփակ որակի սպահովման շրջանակ, որը ներառում է ՈԱ գործընթացների բոլոր հիմնական

[1] Մասնակցությունը չի հակասում կարգավիճակի վերաբերյալ դիրքորոշումներին և համապատասխանում է Կոսովոյի անկախության հռչակման վերաբերյալ ՄԱԿ-ի ԱԽ 1244/1999 և ԱՄԴ կարծիքին:

շահակիցներին և ուղղված է որակի շարունակական բարելավմանը: Գործընկերները նաև նշել են, որ ձևավորող գնահատման բաղադրիչը հաստատությունների ներքին և արտաքին գնահատման շրջանակի մաս է կազմում: Բարելավման ենթակա ոլորտների համատեքստում խորհուրդ է տրվել տարածել ձևավորող գնահատման որակի ապահովման լավագույն փորձը: Այս նպատակով առաջարկվում է մշակել ուղեցույցներ, կազմակերպել դասախոսների վերապատրաստումներ և խթանել ՄԿՈՒ հաստատությունների միջև լավագույն փորձի փոխանակումը: Գործընկերները նաև առաջարկել են մասնավոր հատվածի կարիքները ներկայացնել ՄԿՈՒ ոլորտի բոլոր դերակատարներին՝ ուսումնառության արդյունքներն ու գնահատման չափանիշները դրանց համապատասխանեցնելու նպատակով:

ՆԱԽԱԲԱՆ

Սույն զեկույցն ամփոփում է ՄԿՈՒ որակի ապահովման ETF ֆորումի եռօրյա գործընկերային այցը Հայաստան և ներկայացնում գործատուների ներգրավվածությամբ ձևավորող գնահատման որակի ապահովումը Հայաստանում ու ETF անդամ այլ երկրներում: Զեկույցը տրամադրում է դիտարկումներ, թե ինչպես կարող են որակի ապահովման միջոցառումները, մասնավորապես՝ արտաքին գնահատումը, նպաստել ՄԿՈՒ հաստատություններում արդյունավետ ձևավորող գնահատման իրականացմանը:

Թեմատիկ ուղղվածությունից զատ՝ զեկույցը տրամադրում է համապարփակ տեղեկատվություն որակի ապահովման ETF ֆորումի գործընկերային այցերին համակարգային կերպով կիրառվող մեթոդաբանության վերաբերյալ: Թեպետ գործընկերային այցերի մեթոդաբանությունը հատուկ մշակվել է որակի ապահովման ETF ֆորումի համար, այն կարող է կիրառվել ֆորումի համատեքստից դուրս: Մեթոդաբանությունը կարող է խրախուսել նաև կրթության ոլորտի այլ մասնագետների և գործատուների ակտիվ ու արդյունավետ փորձի փոխանակմանը: Զեկույցը հետևում է ETF ֆորումի գործընկերային այցերի չորս փուլից բաղկացած մեթոդաբանության երեք փուլերին՝ պլանավորում, իրականացում, հետադարձ կապ:

Լուսանկար.բացման արարողություն, 21.05.2024: Ձախից աջ՝ ՈԱԱԿ տնօրեն Ռուբեն Թոփչյան, Հայաստանում Եվրոպական միության պատվիրակության ներկայացուցիչ Դավիթ Ավագյան, Երևանի պետական բժշկական համալսարանի պրոռեկտոր Լարիսա Ավետիսյան, ՈԱԱԿ հավատարմագրման հանձնաժողովի անդամ Լուիզա Միլիտոսյան, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատանքի և զբաղվածության վարչության պետ Ժորա Սարգսյան

ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Եվրոպական կրթական հիմնադրամի հայաստանյան ներկայացուցչի՝ «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (ՈԱԱԿ) հրավերով 2024թ. մայիսի 21-23-ը Երևանում տեղի է ունեցել Մասնագիտական կրթության և ուսուցման որակի ապահովման ETF ֆորումի հինգերերդ գործընկերային այցը: Կազմակերպության պատվիրակության կազմում են եղել տնօրեն Ռուբեն Թոփչյանը, Ինստիտուցիոնալ և ծրագրային փորձաքննության բաժնի ղեկավար Վարդուհի Գյուլազյանը և նույն բաժնի մասնագետ Անահիտ Տերտերյանը:

Խմբային լուսանկար. ֆորումի բացման արարողությունը Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանում (ԵՊԲՀ), 21.05.2024

Գործընկերային այցը հնարավորություն է տալիս ստանալու արտաքին արձագանք, որի նպատակն է հյուրընկալող երկրին աջակցել որակի ապահովման համակարգի զարգացման գործում: ՈԱԱԿ-ը ֆորումի անդամ այլ երկրների արտաքին գործընկերներին առաջարկել է արձագանք տրամադրել՝ պարզելու, թե արդյոք որակի արտաքին ապահովման միջոցառումներն արդյունավետորեն են ազդում ձևավորող գնահատման որակի վրա: Առանձնահատուկ կարևորություն է տրվել ձևավորող գնահատման գործընթացում գործատուների ներգրավվածությանը: ՈԱԱԿ-ը գործընկերներին առաջարկել է նաև տրամադրել խորհրդատվություններ՝ ուղղված ՄԿՈՒ համակարգում ձևավորող գնահատման լավագույն փորձերի արդյունավետ տեղայնացմանը:

Որակի ապահովման ETF ֆորումի անդամների հիմնական գործառույթներից է ընդհանուր մարտահրավերներին լուծումներ գտնելու ուղղությամբ համագործակցությունը: Հենց այս համատեքստում է աշխատանքի հիմնական մեթոդ ընտրվել գործընկերային այցը:

Գործընկերային այցերը հնարավորություն են ստեղծում հետևյալ միջոցառումների իրականացման համար.

- ազգային շահակիցների ներգրավում ՄԿՈՒ որակի ապահովման միջազգային գործընկերային գնահատման գործընթացներին,
- որակի ապահովման գնահատման ենթակա թեմաների վերաբերյալ արտաքին, քննադատական, բայց աջակցությանը միտված դիտարկումների և արձագանքների ստացում,
- հյուրընկալող երկրին տրվող աջակցություն՝ ուղղված ՄԿՈՒ որակի ապահովման մոտեցումների ու գործընթացների վերլուծությանը և ինքնագնահատման իրականացմանը,
- ՄԿՈՒ որակի ապահովման արդյունավետ բարեփոխումների իրականացման համար արտաքին գործընկերներից ստացված տվյալների հավաքագրում,
- Մասնագիտական կրթության և ուսուցման որակի ապահովման ETF ֆորումի Գործընկերային այցի ձեռնարկը մշակվել է ARQA-VET-ի (Österreichische Referenzstelle für Qualität in der Berufsbildung) և ETF–ի որակի ապահովման թիմի համագործակցության արդյունքում: Ձեռնարկն իրենից ներկայացնում է

ուղեցույց, վերապատրաստման հայեցակարգ և տրամադրում է անհրաժեշտ գործիքակազմ գործընկերային այցերի իրականացման համար:

Գործընկերային այց – փուլ առաջին, պլանավորում.

- ինքնագնահատման բովանդակությունը հստակեցնելու նպատակով Zoom հանդիպում ՈԱԱԿ–ի հետ
- SWOT վերլուծության իրականացում ՈԱԱԿ-ի կողմից
- ազգային փորձի ներկայացում գործընկերների կողմից:

Նախապատրաստական փուլում հյուրընկալող հաստատությունը համապատասխան շահակիցների հետ պլանավորում և կազմակերպում է գործընկերային այցը: Գործընկերները պետք է ունենան իրենց դերերի ու պարտականությունների կատարման համար անհրաժեշտ գիտելիքներ և պատրաստվածություն:

Գործընկերային այցի մեթոդաբանություն – փուլ 1 - պլանավորում
Ներգրավված դերակատարների համար կարևորությունը Հյուրընկալող կողմ. - խթանել գնահատման ենթակա թեմայի վերլուծությունն ազգային մակարդակով՝ ապահովելով համապատասխան շահակիցների լայն շրջանակի ներգրավվածությունը, - բարձրացնել ազգային համակարգի նկատմամբ միջազգային վստահությունը և թափանցիկությունը: Գործընկերային այց իրականացնողներ. - ՄԿՈՒ որակի ապահովման ազգային և միջազգային զարգացումների համատեքստում խթանել վերլուծական և քննադատական մտածողության կարողությունները, - խթանել սեփական երկրի գործընթացների ինքնավերլուծությունը գնահատման ենթակա թեմայի շրջանակում:

Որակի ապահովման ETF ֆորումի այլ անդամ երկրների ներկայացուցիչները հրավիրվել են մանրամասն ծանոթանալու Հայաստանի ՄԿՈՒ համակարգին: Այդ նպատակով ՈԱԱԿ-ը կազմել է անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթ, որը ներառում է Ազգային համատեքստը ներկայացնող զեկույց (հատուկ մշակված գործընկերային այցի համար), SWOT վերլուծություն և մի շարք իրավական ու ընթացակարգային փաստաթղթեր:

Գնահատման ենթակա թեմայի շրջանակը գործընկերային այցի ուշադրության կենտրոնում. ձևավորող գնահատման որակի ապահովում գործատուների ներգրավմամբ
Գործընկերային այցի համատեքստ ՀՀ ՄԿՈՒ ոլորտում իրականացվում են բարեփոխումներ, որոնք նպատակ ունեն մեծացնել կրթության համապատասխանությունը աշխատաշուկայի արդի պահանջներին և բարձրացնել շրջանավարտների զբաղվածության մակարդակը՝ մինչև 2030թ. այն հասցնելով 90%–ի: Գործընկերային այցի ընթացքում Ազգային ժողովի կողմից ընդունման փուլում էր «Մասնագիտական կրթության և ուսուցման մասին» նոր օրենքը: Վերջինս ուղղված է լինելու դուալ կրթական ծրագրերի իրականացմանը, պետական կրթական չափորոշիչների մշակման ընթացակարգի վերանայմանը, կրթական ծրագրերի և ինստիտուցիոնալ ու

ծրագրային նախահավատարմագրմանը և հավատարմագրմանը: ՄԿՈՒ արդյունավետության գնահատման որակի ապահովման հիմնական գործիքը ՄԿՈՒ հաստատությունների ինստիտուցիոնալ հավատարմագրումն է: Փորձնական հավատարմագրումից հետո, ՈԱԱԿ վերահսկողությամբ գործընթացն աստիճանաբար ներդրվում է բոլոր ՄԿՈՒ հաստատություններում (նպատակը բոլոր հաստատությունների հավատարմագրումն է մինչև 2025թ.): ՈԱԱԿ տվյալները ցույց են տալիս, որ ՄԿՈՒ հաստատություններում աշխատանքին միտված ձևավորող գնահատման արդյունավետ իրականացումն ապահովում է ինչպես զբաղվածության բարձր մակարդակ, այնպես էլ գործատուների կարիքներին համապատասխան հմտությունների և կարողությունների ձեռքբերում: ՈԱԱԿ-ը նախաձեռնել է ՄԿՈՒ հաստատությունների ինստիտուցիոնալ հավատարմագրում՝ շեշտը դնելով հաստատությունների կողմից ձևավորող գնահատման փորձը բարելավելու և այն աշխատանքին միտված դարձնելու վրա, քանի որ որոշ ոլորտներում կրթությունը շարունակում է մնալ առավել տեսական:
ՈԱԱԿ-ի՝ հյուրընկալող հաստատության հետաքրքրության շրջանակը Ստանալ անհատական, համապարփակ արձագանք հետևյալի վերաբերյալ. • արդյո՞ք որակի արտաքին ապահովման միջոցառումներն արդյունավետորեն են ազդում ձևավորող գնահատման որակի վրա, և ինչպե՞ս կարող են բարելավվել ՈԱԱԿ միջոցառումները, • ինչպե՞ս կարելի է խթանել ձևավորող գնահատման արդյունավետ փորձերի ինտեգրումը ՄԿՈՒ համակարգում, ի՞նչ տարրերի պետք է առաջնահերթություն տալ այս նպատակով, • տրամադրել ընդհանուր վերլուծություն Հայաստանում որակի ապահովման համակարգի վերաբերյալ: ՈԱԱԿ-ի նպատակն է եղել նաև ծանոթանալ Ֆորումի անդամ երկրների ձևավորող գնահատման լավագույն փորձերին:

Համակարգն արտաքին գործընկերներին ներկայացնելու համար շատ կարևոր է, որ հյուրընկալող երկիրը գործընթացի սկզբից ընտրի և ներգրավի համապատասխան շահակիցների: Վերջիններս պետք է մասնակցեն արտաքին գնահատման ենթակա տիրույթի ուժեղ և թույլ կողմերի վերլուծությանը (SWOT վերլուծություն), արտաքին գործընկերներին ուղղված հարցերի սահմանմանը և ստացված արձագանքների հիման վրա իրականացնեն օգտակար հետևություններ: Շահակիցների այդպիսի ներգրավվածությունը թույլ կտա պատշաճ կերպով հետևել արտաքին գործընկերների տրամադրած արձագանքին և խորհրդատվություններին:

ՈԱԱԿ-ը տրամադրել է ազգային մակարդակով իրականացված ՄԿՈՒ համակարգի որակի ապահովման SWOT վերլուծությունը:

ՄԿՈՒ համակարգում որակի ապահովման SWOT վերլուծություն

Ընտրված որակի ապահովման թեմա: Ձևավորող գնահատման որակի ապահովում

Ուժեղ կողմեր (ներքին)

1. **Համապատասխանեցում գործատուի կարիքներին** – Հավատարմագրման գործընթացն ընդգծում է ՄԿՈՒ կրթական ծրագրերը գործատուների կարիքներին համապատասխանեցնելու կարևորությունը:
2. **Որակի արտաքին ապահովման շրջանակը խթանում է գործատուների ներգրավվածությունը** – ՈԱԱԿ-ի ՄԿՈՒ հավատարմագրման շրջանակը նպաստում է գործատուների ներգրավվածությանը ուսանողների գնահատման գործընթացում:
3. **Որակի արտաքին ապահովումը մեծ նշանակություն է տալիս ձևավորող գնահատմանը** – Փորձագետները մեծ ուշադրություն են դարձնում ձևավորող գնահատման փորձի վրա՝ նպատակ ունենալով խրախուսել ՄԿՈՒ հաստատություններին պատշաճ կերպով խթանել հետադարձ կապի ապահովումը հանձնարարականների միջոցով:
4. **Փորձագետների առաջարկությունները խթանում են ՈՆԱ մշակույթի զարգացումը ՄԿՈՒ ոլորտում** – Փորձագիտական խմբի խորհրդատվություններն ուղղված են ՄԿՈՒ ոլորտում ձևավորող գնահատման բարելավմանը, գործատու-ՄԿՈՒ հաստատություն հաղորդակցության բարելավմանը, ինչպես նաև ՄԿՈՒ ոլորտում ՈՆԱ մշակույթի զարգացման ամրապնդմանը:
5. **Որակի արտաքին ապահովումը շեշտադրում է գործատուի արձագանքի վրա հիմնված գնահատումը** – Փորձագիտական խումբը կարևորում է, թե որքանով են առաջադրանքները և գնահատման չափանիշները արդիական և հիմնված գործատուի արձագանքի վրա:

Թույլ կողմեր (ներքին)

1. **Ոլորտային մասնագետների սահմանափակ առկայություն փորձագիտական խմբերում** – Գործատուի բացակայությունը փորձագիտական խմբում հանգեցնում է ընդհանրական խորհրդատվությունների:
2. **Որակի արտաքին ապահովման կողմից բացահայտված տեսական գնահատում** – ՄԿՈՒ հաստատություններում գնահատման փորձը հաճախ առաջնահերթություն է տալիս տեսական մոտեցումներին՝ անտեսելով գործնական կիրառությունը և համապատասխանությունը իրական կյանքի պահանջներին:
3. **Գործատուների սահմանափակ համագործակցություն** – Գործատուները միշտ չէ, որ պատրաստակամություն են հայտնում համագործակցելու ՄԿՈՒ հաստատությունների հետ կամ ժամանակ հատկացնում իրենց կարիքներն արտահայտելու համար, ինչը խոչընդոտում է կրթության համապատասխանությունը ոլորտի պահանջներին:
4. **Գործատուների հետ համագործակցության փորձի բացակայություն** – ՄԿՈՒ հաստատությունները կարող են չունենալ անհրաժեշտ փորձ և մեխանիզմներ գործատուներին ներգրավելու և արդյունավետ համագործակցություն հաստատելու համար, ինչը սահմանափակում է ոլորտին համապատասխան կրթության տրամադրման հնարավորությունները:
5. **Ձևավորող գնահատման արդյունավետության գնահատման ոչ բավարար մեխանիզմներ** – ՄԿՈՒ որակի ներքին ապահովման պատասխանատուները երբեմն չեն ունենում մշակույթի զարգացման բավարար գործիքներ և մեխանիզմներ՝ ձևավորող գնահատման արդյունավետությունը գնահատելու համար, ինչը բերում է կրթական

	վերջնարդյունքների ճշգրիտ չափման մարտահրավերների:
Հնարավորություններ (արտաքին) 1. **Լիցենզավորման պահանջների փոփոխություններ** – Լիցենզավորման պահանջները, որոնք նվազեցնում են հիմնական անձնակազմի անհրաժեշտությունը 80%-ից մինչև 50%, թույլ են տալիս գործատուներին ավելի մեծ չափով ներգրավվել դասավանդման գործընթացում, ինչը կարող է ուսումնական պլանը հարստացնել ոլորտային առանձնահատկություններով և փորձով: 2. **Օրենսդրական փոփոխություններ, որոնք հանգեցնում են ՄԿՈՒ հաստատությունների ավելի մեծ ինքնավարությանը** – Ներկայիս օրենսդրական փոփոխությունները նպատակ ունեն ՄԿՈՒ հաստատություններին տրամադրել ավելի մեծ ինքնավարություն ֆինանսական ռեսուրսների դիվերսիֆիկացման և կրթական ծրագրերի գնահատման առումով, ինչը թույլ կտա առավել արդյունավետ արձագանքել ուսանողների և աշխատաշուկայի կարիքներին:	**Սպառնալիքներ (արտաքին)** 1. **Տնտեսական տատանումներ** – Տնտեսական ճգնաժամերը կամ անկայունությունը կարող են նվազեցնել գործատուների պատրաստակամությունը կամ կարողությունը ՄԿՈՒ հաստատությունների հետ համագործակցելու, ինչը սահմանափակում է համատեղ ծրագրերի իրականացումը: 2. **Քաղաքականության և կարգավորող շրջանակի փոփոխություններ** – Կառավարության քաղաքականության, կանոնակարգերի կամ առաջնահերթությունների փոփոխությունները կարող են վտանգել ՄԿՈՒ հաստատությունների ինքնավարությունը և մասնավոր հատվածի հետ համագործակցելու նրանց կարողությունը: 3. **Հասարակական ընկալումներ** – Չնայած ՄԿՈՒ ոլորտում բարելավումների և նորարարությունների առկայությանը, հասարակական ընկալումները կարող են անփոփոխ մնալ՝ ՄԿՈՒ կրթությունը դարձնելով պակաս գրավիչ ուսանողների համար, ինչը կարող է խոչընդոտել մասնագիտական կրթության կարգավիճակի բարձրացմանը:

Այցն իրականացրած գործընկերներ

Այցին մասնակցել են գործընկերներ (ներկայացնում են որակի ապահովման ETF ֆորումի անդամ հաստատությունները) Ալբանիայից, Վրաստանից, Իսրայելից, Հորդանանից, Կոսովոյից[2], Չեռնոգորիայից, Հյուսիսային Մակեդոնիայից, Սերբիայից:

Նախապատրաստական փուլում այցն իրականացնող գործընկերների առջև դրված հիմնական խնդիրը եղել է ՈԱԱԿ-ի պատրաստած Ազգային համատեքստը ներկայացնող զեկույցի ու կից փաստաթղթերի ուսումնասիրությունը, առաջադրած հարցերի դիտարկումը:

Լուսանկար. գործընկերների ժամանում Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի քոլեջ, 21.05.2024

ՈԱԱԿ-ը գործընկերներին առաջարկել է ներկայացնել հակիրճ տեղեկատվություն իրենց երկրներում ձևավորող գնահատման որակի ապահովման վերաբերյալ՝ շեշտադրելով հետևյալ հիմնական ասպեկտները.

1. ուսումնառության գնահատման գործիքները,
2. գործատուների ներգրավման մեխանիզմներն առաջադրանքների և գնահատման չափանիշների մշակման գործընթացում՝ ուսանողներին արդյունավետ հետադարձ կապ ապահովելու նպատակով,
3. աշխատանքի վրա հիմնված ուսուցման շրջանակում ուսումնառության գնահատման իրականացումը գործատուի միջավայրում, ինչպես նաև այն փուլերը, որոնց ընթացքում կիրառվում է ձևավորող գնահատումը,
4. մեթոդներ և մեխանիզմներ, որոնք օգնում են դասախոսներին և գործատու-դասախոսներին նախապատրաստվել ձևավորող գնահատման գործընթացին:

[2] Մասնակցությունը չի հակասում կարգավիճակի վերաբերյալ դիրքորոշումներին և համապատասխանում է Կոսովոյի անկախության հռչակման վերաբերյալ ՄԱԿ-ի ԱԽ 1244/1999 և ԱՄԴ կարծիքին:

ՈԱԱԿ-ը, գործընկերների ազգային փորձերը դիտարկելուց հետո, առաջարկել է Վրաստանի և Իսրայելի ներկայացուցիչներին առավել մանրամասն ներկայացնել իրենց փորձը:

Լուսանկարներ. Վրաստանի ներկայացուցիչ Կախաբեր Էրաձե, Իսրայելի ներկայացուցիչ դոկտոր Յարոն Դոպելտ

Վրաստանի և Իսրայելի ձևավորող գնահատման որակի ապահովմանն ուղղված ազգային փորձերի վերլուծություն

Վրաստանում ՄԿՈՒ հաստատությունների ուսումնական պլանը կազմված է մոդուլներից: Յուրաքանչյուր մոդուլ ծրագրի ինքնուրույն բաղադրիչ է, որը կարող է մատուցվել նաև որպես կարճաժամկետ դասընթաց: Մոդուլը բաղկացած է 2-ից 6 ուսումնառության արդյունքի համակցությունից, որոնք անհրաժեշտ են մասնագիտական համապատասխան առաջադրանք կատարելու համար: Ձևավորող գնահատումները լայնորեն կիրառվում են ուսումնառության ընթացքում և չեն ազդում ամփոփիչ գնահատման վրա (դրանց միավորները գնահատականների մաս չեն կազմում կամ հաշվարկվում ուսումնառության ավարտին): Ձևավորող գնահատումը հիմնականում կիրառվում է ուսանողների կարողությունների զարգացմանն աջակցելու և մոդուլային ծրագրի իրականացման գործընթացի մշտադիտարկման նպատակով: Ազգային ուսումնական պլանը սահմանում է ամփոփիչ գնահատման սկզբունքները յուրաքանչյուր ուսումնառության արդյունքի համար: ՄԿՈՒ հաստատությունները պատասխանատու են յուրաքանչյուր ուսումնառության արդյունքի գնահատման գործիքների մշակման համար: Միևնույն ժամանակ, նրանք պարտավոր են կիրառել որակի ապահովման մեխանիզմներ ուսանողների գնահատման գործընթացում՝ «վավերացում» իրականացնելու նպատակով: Վավերացման գործընթացը հաստատում է, որ ուսանողների գնահատման համակարգը համապատասխանում է հինգ հիմնարար չափանիշների՝ հավաստիություն, հուսալիություն, թափանցիկություն, օբյեկտիվություն և արդարություն: Ուսանողների գնահատման տվյալները թվային ձևաչափով պահպանվում են ուսման ողջ ժամանակահատվածում (մինչև որակավորում շնորհելը) և ցանկացած պահի պետք է հասանելի լինեն որակի արտաքին ապահովման գործընթացների համար: 2024թ.–ից նոր ընդունված ուսանողների համար կներդրվեն պարտադիր միջանկյալ գնահատումներ, որոնք պետք է իրականացվեն ծրագրի կեսին (երկամյա ծրագրի դեպքում գնահատումն իրականացվում է առաջին կուրսից հետո): Գնահատման արդյունքները որևէ ազդեցություն չեն ունենա ուսանողների վրա և չեն առաջացնի իրավական հետևանքներ (օրինակ՝ կարգավիճակի կասեցում կամ դադարեցում, ֆինանսական աջակցության մերժում և այլն): Կկիրառվեն որպես ծրագրի իրականացման որակի ներքին ապահովման մեխանիզմ՝ հնարավորություն տալով հաստատությանը գնահատել ծրագրի արդյունավետությունը և անհրաժեշտության դեպքում կատարել համապատասխան բարելավումներ:

Գործատուները ոլորտային հմտությունների կազմակերպությունների (SSO-ների) միջոցով կարևոր դեր ունեն ուսումնական պլանների ձևավորման գործընթացում: Ազգային ուսումնական պլանները մշակվում են մասնավոր հատվածի ու կրթության ոլորտի հետ սերտ համագործակցության արդյունքում և հաստատվում Ոլորտային հմտություններ տրամադրող կազմակերպությունների կամ մասնավոր հատվածի ներկայացուցիչների կողմից: Հետևաբար գնահատման չափանիշների մշակումը լիովին գործատուի պատասխանատվության շրջանակում է: Եթե ծրագիրն իրականացվում է աշխատանքի վրա հիմնված ուսուցման միջոցով, հաստատությունը և գործընկեր կազմակերպությունը բաշխում են

մոդուլները/ուսումնառության արդյունքները միմյանց միջև՝ համակարգված կերպով ապահովելով դրանց ձեռքբերումն ու գնահատումը:

Այնուամենայնիվ, ձևավորող գնահատումը մարտահրավերներ է առաջացնում Վրաստանի ՄԿՈՒ համակարգի համար, հատկապես այն տեսանկյունից, թե որքանով են հաստատություններն ու կազմակերպությունները համապատասխանում սահմանված գնահատման չափանիշներին՝ հավաստիություն, հուսալիություն, թափանցիկություն, օբյեկտիվություն և արդարություն: Հաստատություններն այս հարցում, իհարկե, ավելի հարուստ փորձ ունեն և աջակցում են գործընկեր կազմակերպություններին դասավանդման/գնահատման գործընթացներում: «Skills» գործակալությունը և Կրթության որակի բարելավման ազգային կենտրոնը (EQE) յուրաքանչյուր տարի կազմակերպում են բազմաթիվ դասընթացներ գնահատման որակի ապահովման թեմայով: 2024թ.սկսած այսպիսի դասընթացները ինստիտուցիոնալ բնույթ կկրեն և պարտադիր կդառնան:

Իսրայելում ձևավորող գնահատումը հիմնականում իրականացվում է ուսուցիչների կողմից, ավագ դպրոցի եռամյա կրթության ծրագրի շրջանակում: Կրթության նախարարությունը յուրաքանչյուր առարկայական ոլորտի համար նշանակում է ազգային կառավարիչներ՝ վերահսկելու ուսումնական պլանների իրականացումը և գնահատման գործընթացը: Կառավարիչների առաքելությունն է մշտադիտարկել ավագ դպրոցները՝ օգնելով բարելավել, արդիականացնել ուսուցման մեթոդները և տարածել ծրագրերը բոլոր ավագ դպրոցներում: Կառավարիչներին աջակցում են ուսուցիչների ղեկավարները, որոնք դպրոցների ուսուցիչներին ուղղորդում են ուսուցման արդյունավետ մեթոդների, այդ թվում՝ ձևավորող գնահատման կիրառման գործում: Ավելին, ուսուցիչները պարտավոր են մասնակցել տարեկան վերապատրաստման ծրագրերին՝ յուրաքանչյուր տարի նվազագույնը 30 ժամ հատկացնելով մասնագիտական զարգացմանը: Այս վերապատրաստման դասընթացները ծանոթացնում են գնահատման տարբեր մեթոդներին՝ առանձնակի շեշտադրելով կոմպետենցիաների գնահատման և նախագծային ուսուցման վերջին տասնամյակում առկա մոտեցումները:

Յուրաքանչյուր տարի ձևավորող և ամփոփիչ գնահատման արդյունքները համեմատվում են: Անհամապատասխանությունների և բացթողումների հայտնաբերման դեպքում կառավարիչը քայլեր է ձեռնարկում դպրոցների աշխատանքի բարելավման ուղղությամբ:

Առաջադրանքները կազմվում են կամ ուսուցիչների մասնագիտական զարգացման ծրագրերի շրջանակում կամ ազգային մակարդակում՝ ուսումնական նյութերի մշակման գործընթացում: Երկու դեպքում էլ գործընթացը վերահսկվում է կառավարչի և ուսուցիչ-ղեկավարների կողմից: Առաջադրանքների պատրաստման հիմք են նաև դպրոցների ավարտական քննությունները: Աշակերտները, ուսուցիչները և ուսուցիչների ղեկավարները հետադարձ կապ են տրամադրում առաջադրանքների բարելավման ուղղությամբ:

Գործատուները հիմնականում չեն ներգրավվում ավագ դպրոցի աշակերտների կամ տեխնոլոգիական քոլեջի ուսանողների համար նախատեսված առաջադրանքների մշակման կամ գնահատման չափանիշների սահմանման գործընթացներում: Աշակերտները և ուսանողներն անցնում են ուսումնական հաստատությունների կողմից իրականացվող ներքին և արտաքին գնահատումներ: Ավագ դպրոցի տեխնոլոգիական մասնագիտություններ ուսումնասիրող աշակերտների ուսումնական պլանի զգալի մասը հատկացվում է մասնագիտական առարկաներին: Աշակերտները թեստավորվում են ինչպես ներքին, այնպես էլ արտաքին գնահատումների միջոցով: Ավարտական հաջող արդյունքներ գրանցած աշակերտներին և ուսանողներին շնորհվում է տեխնոլոգիական կրթությունը հավաստող վկայական, որն ուրվագծում է նրանց ձեռքբերումներն ուսումնասիրած առարկաների շրջանակում:

Գնահատման ավանդական մեթոդներից զատ՝ նկատելի է նաև նախագծային ուսուցման աճող միտում այնպիսի ոլորտներում, ինչպիսին է, օրինակ՝ համակարգային ճարտարագիտությունը: Այս մոտեցումը ներառում է գործնական ուսուցում և համակարգի նախագծման գործընթացի գնահատում՝ հնարավորություն տալով ուսանողներին ձեռք բերել գործնական հմտություններ և գիտելիքներ:

Գործընկերային այց – փուլ երկրորդ, իրականացում

Այս փուլում է տեղի ունենում գործընկերային այցը: Հյուրընկալող հաստատությունը ներկայացնում է իր ՄԿՈՒ համակարգի որակի ապահովման մոտեցումը՝ շեշտը դնելով գործընկերային այցի համար ընտրված որակի ապահովման թեմայի վրա: Գործընկերներն այցելում են հյուրընկալող հաստատություն և այլ անհրաժեշտ կառույցներ, լսում են մասնագետների ելույթները, մասնակցում տարբեր քննարկումների, դիտարկում գործընթացները և ավելի խորը պատկերացում կազմում որակի ապահովման գնահատման ենթակա թեմայի մասին:

Գործընկերային այց – փուլ 2 – իրականացում
Ներգրավված դերակատարների համար կարևորությունը

Հյուրընկալող կողմ

- ձեռք բերել արտաքին դիտարկումներ ազգային փորձի և ընթացակարգերի վերաբերյալ
- գործընկերային գնահատման հիման վրա զարգացնել ազգային համակարգի և ընթացակարգերի ներկայացման, գնահատման բարելավմանն ուղղված կարողությունները
- որպես շահակից՝ գիտակցել ազգային համակարգի գործարկման մեջ սեփական դերի կարևորությունը
- աջակցել շահակիցներին՝ համագործակցության հաստատման և առկա փորձի ու ընթացակարգերի բարելավման ուղղությամբ

Այցն իրականացնող գործընկերներ

- խորը պատկերացում կազմել գործընկեր կազմակերպությունների կողմից այլ երկրներում կիրառվող փորձի և իրականացվող գործընթացների վերաբերյալ
- խթանել հաղորդակցման համար կարևոր կոմպետենցիաների և հմտությունների (ուշադիր և արդյունավետ ունկնդրում, դիտարկում, հարցադրումների ներկայացում) զարգացումը
- միջազգային մակարդակով ձևավորել աշխատանքային հարաբերություններ գործընկեր կազմակերպությունների մասնագետների հետ

Գործընկերային այցը մեկնարկել է առցանց հանդիպմամբ, որը վարել են Հայաստանի հյուրընկալող կազմակերպության՝ ՈԱԱԿ–ի ներկայացուցիչները՝ տնօրեն և ազգային կոնտակտային անձ Ռուբեն Թոփչյանը, Ինստիտուցիոնալ և ծրագրային փորձաքննության բաժնի ղեկավար Վարդուհի Գյուլազյանը և մասնագետ, ազգային այլընտրանքային կոնտակտային անձ Անահիտ Տերտերյանը:

Լուսանկարներ. առաջին լուսանկար, ձախից աջ՝ Հայաստանի ազգային կոնտակտային անձ Ռուբեն Թոփչյան, Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության վարչության պետ Արմենուհի Պողոսյան, ազգային այլընտրանքային կոնտակտային անձ Անահիտ Տերտերյան: Երկրորդ լուսանկար՝ ՈԱԱԿ ներկայացուցիչ Վարդուհի Գյուլազյան, ETF ՄԿՈՒ քաղաքականությունների մասնագետ Մունիր Բաստի

Համատեքստի ներկայացում. Մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈՒ) համակարգի որակի ապահովումը Հայաստանում

Հայաստանում ՄԿՈՒ համակարգը հիմնականում հիմնված է դպրոցական կրթության վրա և ունի երկու մակարդակ՝ նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթություն և միջին մասնագիտական կրթություն: Նախնական մասնագիտական կրթությունն իրականացվում է 23 նախնական (արհեստագործական) ուսումնական հաստատություններում, միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում, ուսումնական կենտրոններում, քրեակատարողական հիմնարկներում: Արհեստագործական կրթություն ստացած շրջանավարտներին տրվում է նախնական արհեստագործական կրթության դիպլոմ և «Արհեստագործ» որակավորում: Նախնական (արհեստագործական) կրթական ծրագրի ուսուցման տևողությունը 6 ամսից մինչև 3 տարի է:

Միջին մասնագիտական կրթություն կարելի է ստանալ միջին մասնագիտական 63 պետական և 24 մասնավոր ուսումնական հաստատություններում, ինչպիսիք են՝ քոլեջները, ուսումնական կենտրոնները և այլն: Տևողությունը կախված է կրթության մակարդակից (հիմնական կամ միջնակարգ) և մասնագիտությունից: Տևում է 2-ից 5 տարի: Շրջանավարտներին շնորհվում է միջնակարգ մասնագիտական կրթության դիպլոմ՝ «Մասնագետ» որակավորմամբ:

Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ծրագրերի ուսանողների թիվը վերջին 4 ուսումնական տարիների ընթացքում աճել է 33%-ով, հատկապես գյուղատնտեսական գիտություններ, կառավարում և բիզնես կառավարում, տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներ, ճարտարապետություն և շինարարություն, առողջապահություն ոլորտներում:

Ոլորտի կառավարումն իրականացվում է մի շարք կառույցների կողմից: **Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի (ԿԳՄՍ) նախարարությունը** պատասխանատու է քաղաքականության առաջնահերթությունների մշակման և իրականացման համար: ԿԳՄՍՆ-ն ընդունում է պետական կրթական չափորոշիչները և պատասխանատու է կրթական հաստատությունների ու ՄԿՈՒ ծրագրերի լիցենզավորման համար: **ՈԱԱԿ–ն** իրականացնում է որակի ապահովման գործընթացներ ինստիտուցիոնալ հավատարմագրման միջոցով: **Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային կենտրոնը (ՄԿՈՒԶԱԿ)** զբաղվում է պետական կրթական չափորոշիչների մշակման և վերանայման գործընթացի կազմակերպմամբ՝ ներգրավելով սոցիալական գործընկերների ներկայացուցիչների: **Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը և կից գործող Մասնագիտական կողմնորոշման և կարողությունների զարգացման կենտրոնը մշակում են կարիերայի ուղղորդման քաղաքականություն ու մեթոդաբանություն**, ինչպես նաև համակարգում են ՄԿՈՒ շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ հետազոտությունները: **ՄԿՈՒ հաստատություններն** ունեն կարիերայի կենտրոններ, որոնք պատասխանատու են ուսանողների կարիերայի նախապատրաստման և շրջանավարտների զբաղվածության ցուցանիշների վերաբերյալ տվյալների

հավաքագրման համար: **Էկոնոմիկայի նախարարությունն** աշխատանքներ է տանում ինչպես ընդհանուր արդյունաբերության քաղաքականության, այնպես էլ առանձին ոլորտային քաղաքականությունների մշակման և իրականացման ուղղությամբ: Նախարարությունն ուսումնասիրում է ոլորտների պահանջարկը և մշակում պահանջված մասնագիտությունների ցանկը:

Աշխատանքի վրա հիմնված ուսուցում

Աշխատանքի վրա հիմնված ուսուցումը (ԱՀՈՒ), որն ապահովում է ընկերությունների ներգրավվածությունը կրթական գործընթացներում, ներդրման փուլում է: Այն վերջին տարիների ընթացքում փորձարկվել է մի շարք ՄԿՈՒ հաստատություններում: 2019թ. հունիսին ՄԿՈՒԶԱԽ-ը հաստատել է 2019-2025թթ. աշխատանքի վրա հիմնված ուսուցման հայեցակարգը և ճանապարհային քարտեզը: Հայեցակարգը նախատեսում է ՄԿՈՒ համակարգում աշխատանքի վրա հիմնված ուսուցման տարբեր ձևերի աստիճանական բարելավում, ինտեգրում և զարգացում: Դրանք ներառում են պրակտիկայի ծրագրերի բարելավում (ԱՀՈՒ ձև 1), նախնական և միջին ՄԿՈՒ հաստատություններին կից «իրական» ձեռնարկությունների ստեղծում (ԱՀՈՒ ձև 2) և աշկերտության/դուալ կրթության ներդրում (ԱՀՈՒ ձև 3):

Թեև Հայաստանի ՄԿՈՒ համակարգում ավանդական կրթությունը առավել լայն տարածում ունի և աջակցվում է «Մասնագիտական կրթության և ուսուցման մասին» օրենքով, վերջին տարիներին ԱՀՈՒ փորձարարական ծրագրերի թիվն աճել է:

ԱՀՈՒ ծրագրերը ներդրվել են Հայաստանի 7 մարզերի 20 ՄԿՈՒ հաստատություններում: ԱՀՈՒ ծրագրերն իրականացվում են զբոսաշրջության, ճշգրիտ ճարտարագիտության, ՏՏ և գինեգործության ոլորտներում: Դուալ կրթական ծրագրերը մշակվում են պետական կրթական չափորոշիչներին համապատասխան: Դուալ կրթական ծրագրերի ուսանողները մասնագիտական մոդուլային ժամերի 50%-ն անցկացնում են գործատուի միջավայրում:

Կարիերայի կենտրոնների տվյալները ցույց են տալիս, որ դուալ կրթական ծրագրերում ընդգրկված շրջանավարտները գրանցում են զբաղվածության ավելի բարձր ցուցանիշ, քան ավանդական կրթական ծրագրերում ներգրավված շրջանավարտները:

Առաջնահերթություններ և մարտահրավերներ

ՄԿՈՒ համակարգի զարգացման նպատակներն ու խնդիրները նախանշված են «ՀՀ կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագրում»: ՄԿՈՒ ոլորտում առանձնահատուկ կարևորություն ունեն ՄԿՈՒ ծրագրերի մատուցումը և որակի ապահովումը, ՄԿՈՒ հաստատությունների որակի ապահովման համակարգի, ինստիտուցիոնալ և մարդկային կարողությունների հզորացումը: Ի թիվս այլ խնդիրների՝ ծրագրով սահմանված հիմնական նպատակը մինչև 2030թ. շրջանավարտների մասնագիտական զբաղվածության մակարդակը 90%-ի հասցնելն է:

Չնայած կառավարության նպատակին՝ բարձրացնել շրջանավարտների զբաղվածության մակարդակը, ՄԿՈՒ հաստատությունները ներկայումս բախվում են բոլոր մասնագիտությունների և ոլորտների ուսանողներին համապատասխան գործնական հմտություններով զինելու մարտահրավերներին: Ներկայումս գործատուների մասնակցությունը ՄԿՈՒ կրթության կազմակերպմանը սահմանափակվում է պրակտիկաներով, որոնք շատ դեպքերում իրականացվում են կրթական ծրագրի ավարտից առաջ, հիմնականում երկու ամիս տևողությամբ և ՄԿՈՒ հաստատությունների կառավարման խորհրդում ներգրավվածությամբ: Դասախոսների և գործատուների միջև համագործակցությունը սահմանափակ է: Գործատուները հիմնականում անմիջականորեն չեն ներգրավվում ուսանողների դասավանդման և գնահատման գործընթացներում: Բացի այդ, ՄԿՈՒ հաստատություններում բավարար ռեսուրսներ չկան գնահատման առաջադրանքները գործատուների համատեքստին համապատասխանեցնելու համար:

ՄԿՈՒ հաստատությունների և գործատուների միջև երկխոսությունը սովորաբար կենտրոնանում է ուսումնական պլանին առնչվող հետադարձ կապի, ոչ թե գնահատման առաջադրանքների վերաբերյալ խորը քննարկումների շուրջ: Այնուամենայնիվ, առկա է ՄԿՈՒ հաստատությունների և գործատուների համագործակցության լավագույն փորձը, որտեղ գործատուները ձևավորող գնահատման մաս են կազմում և դասախոսների հետ սերտորեն համագործակցում են ուսանողների առաջադրանքները կազմելու հարցում: Այս լավագույն փորձերը գերակա են խոհարարական գործի, առողջապահության, SS, արվեստի, զբոսաշրջության, գինեգործության, այլընտրանքային էներգիայի ոլորտներում և, մասնավորապես, այն դուալ ծրագրերում, որոնք համատեղում են և՛ գործնական, և՛ տեսական ուսուցումը:

Լուսանկարներ. Երևանի տարածաշրջանային N 1 պետական քոլեջի ուսանողներ, 22.05.2024

ՄԿՈՒ որակի ապահովման համակարգը Հայաստանում

Հայաստանում որակի ապահովման մշակույթը խթանվում է երկու հիմնական սկզբունքների հիման վրա՝ հաշվետվողականություն և շարունակական բարելավում: Որակի արտաքին ապահովման նպատակն է նախնական մասնագիտական և միջին մասնագիտական կրթությունը համապատասխանեցնել շահակիցների և հասարակության կարիքներին:

ՄԿՈՒ ոլորտում որակի արտաքին ապահովումն իրականացվում է հավատարմագրման միջոցով: Որակի արտաքին ապահովումը ներառում է երկու տեսակի հավատարմագրումներ՝ ինստիտուցիոնալ և ծրագրային: Աս գործընթացը հիմնված է «համապատասխանություն հայտարարված նպատակներին» սկզբունքի վրա և իրականացվում է ՈԱԱԿ–ի կողմից:

Որակի արտաքին ապահովումն առաջին հերթին կարևորում է ուսումնական հաստատությունների սահմանած նպատակների իրականացումը և որոշում դրանց համապատասխանությունը ՀՀ կառավարության կողմից սահմանված որակի ապահովման չափանիշներին և չափորոշիչներին:

Ինստիտուցիոնալ հավատարմագրում

Ինստիտուցիոնալ հավատարմագրումը կենտրոնանում է ՄԿՈՒ հաստատությունների ու կրթական ծրագրերի կառավարման, ինչպես նաև ուսուցման, ուսումնառության և գնահատման գործընթացների արդյունավետ իրականացման վրա: Ինստիտուցիոնալ հավատարմագրումը պարտադիր է բոլոր ՄԿՈՒ հաստատությունների համար:

Ինստիտուցիոնալ հավատարմագրումն իրականացվում է՝ ըստ 10 ոլորտների.

1. Առաքելությունը և նպատակները,
2. Կառավարումն ու վարչարարությունը,
3. Մասնագիտության կրթական ծրագրերը,

4. Ուսանողները,
5. Պրոֆեսորադասախոսական եվ ուսումնաօժանդակ կազմը,
6. Հետազոտությունը և զարգացումը,
7. Ենթակառուցվածքը և ռեսուրսները,
8. Հասարակական պատասխանատվությունը,
9. Արտաքին կապերը և միջազգայնացումը,
10. Որակի ներքին ապահովման համակարգը:

Չափանիշները ներառում են 56 չափորոշիչներ:

ՄԿՈՒ հաստատություններում ներկայումս իրականացվում է միայն ինստիտուցիոնալ հավատարմագրում: Հավատարմագրման գործընթացը նկարագրված է «ՀՀ մասնագիտական կրթության փորձաքննության անցկացման ձեռնարկ»-ում:

Հավատարմագրման գործընթացի ինստիտուցիոնալացմանը և լայն տարածմանը նախորդել է դրա փորձնական փուլը:

2018թ. ՈԱԱԿ-ը մեկնարկել է ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացներ 4 գյուղատնտեսական քոլեջներում, ինչը ԵՄ բյուջետային աջակցության «Ավելի լավ հմտություններ՝ ավելի լավ աշխատանքի համար» ծրագրի պայմանն էր: 2019թ.–ից ՄԿՈՒ պետական հաստատություններին ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացների իրականացման նպատակով պետական ֆինանսավորում է հատկացվել: Տարեցտարի ՄԿՈՒ հաստատությունների հավատարմագրման համար հատկացվող պետական ֆինանսավորումն աճում է (2020թ.՝ 5, 2021թ.-ին՝ 5, 2022թ.-ին՝ 5, 2023թ.-ին՝ 15, 2024թ.-ին՝ 20): ՀՀ կառավարության ռազմավարությամբ նախատեսված է, որ մինչև 2025թ. պետական բոլոր ՄԿՈՒ հաստատություններն անցնեն ինստիտուցիոնալ հավատարմագրում:

Մասնավոր ՄԿՈՒ հաստատությունները նույնպես մոտիվացված են ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու գործընթացով և դիմում են ինստիտուցիոնալ հավատարմագրման համար՝ սեփական ֆինանսական միջոցներով:

Լուսանկարներ. ձախից աջ՝ ՄԿՈՒ քաղաքականությունների մասնագետ Մունիր Բաստի, ՈԱԱԿ տնօրեն Ռուբեն Թոփչյան, Վրաստանի կրթության որակի զարգացման ազգային կենտրոնի ներկայացուցիչ Քեթեվան Չիշխելի և Ֆրանս-հայկական մասնագիտական ուսումնական կենտրոնի ներկայացուցիչ Ելենա Մարտիրոսյան

Ծրագրային հավատարմագրում

Ծրագրային հավատարմագրումը պետության կողմից մասնագիտական կրթական ծրագրի (ՄԿԾ), մասնագետների պատրաստման որակի՝ պետական կրթական չափորոշիչներին և ծրագրային հավատարմագրման չափանիշներին համապատասխանության ճանաչումն է: Ծրագրային հավատարմագրման թիրախն առանձին մասնագիտական կրթական ծրագիրն է: Այս գործընթացը թույլ է տալիս պարբերաբար գնահատել մասնագիտական կրթական ծրագրի արդյունավետությունը, ինչպես նաև ստուգել, թե արդյոք այն ապահովում է ուսանողների կողմից ակնկալվող ուսումնառության արդյունքների ձեռքբերումն ամբողջ ծավալով: Ծրագրային հավատարմագրումն իրականացվում է ՄՈՒՀ-ի նախաձեռնությամբ, կամավորության սկզբունքով՝ բացառությամբ բժշկական մասնագիտական կրթական ծրագրերի, որոնք պետք է պարտադիր անցնեն ծրագրային հավատարմագրում:

Ծրագրային հավատարմագրումն իրականացվում է յոթ չափանիշների հիման վրա, որոնք ներառում են հետևյալ ոլորտները.

1. Մասնագիտության կրթական ծրագիրը,
2. Դասախոսական կազմը,
3. Դասավանդումը և ուսումնառությունը,
4. Ուսանողների գնահատումը,
5. Հետազոտական և ստեղծագործական գործունեությունը,
6. Կրթական միջավայրը,
7. Որակի ապահովումը:

Հավատարմագրման գործընթացը

Հավատարմագրման գործընթացը տեղի է ունենում 3 փուլով.

1. **Ինքնավերլուծությունը** հաստատության կամ նրա կրթական ծրագրի գնահատման գործընթացն է, որին հաջորդում է գրավոր զեկույց՝ հիմնված ՀՀ կառավարության կողմից ընդունված չափորոշիչների վրա:
2. **Արտաքին գնահատման շրջանակում** փորձագիտական խումբն իրականացնում է նախնական գնահատում, որը ներառում է ինքնավերլուծության զեկույցի և հաստատության կողմից ներկայացված բոլոր կարևոր փաստաթղթերի ուսումնասիրությունը: Այնուհետև տեղի է ունենում փորձագիտական այց, որի ընթացքում փորձագիտական խմբի անդամներն անձամբ են հանդիպում հաստատությունների ներկայացուցիչների՝ վարչական և ուսումնաօժանդակ կազմի, ուսանողների, շրջանավարտների և գործատուների հետ: Արդյունքում՝ խումբը պատրաստում է գրավոր զեկույց, որը ներառում է խորհրդատվություններ բարելավման ենթակա ոլորտների վերաբերյալ:
3. **Հավատարմագրման մասին որոշումների կայացումը** փաստերի դիտարկման և հրատապ լուծումների կարիք ունեցող ոլորտների վերհանման գործընթացն է: Կարող է կայացվել հետևյալ որոշումներից մեկը.
   - շնորհել ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 կամ 6 տարի ժամկետով,
   - շնորհել պայմանական հավատարմագրում 2 տարի ժամկետով,
   - մերժել հավատարմագրումը:

Լուսանկարներ. ձախից աջ՝ Սերբիայի որակավորման գործակալության ներկայացուցիչ Իվանա Յվորովիք Պլավշիք, Ալբանիայի միջին մասնագիտական կրթության և ուսուցման և որակավորումների ազգային գործակալության ներկայացուցիչներ Դիանա Ջելիլի և Էլվիս Գիշտի, ETF ներկայացուվիչ Նադեժդա Սոլոդյանկինա

ՈԱԱԿ-ը խթանում է ՄԿՈՒ որակի շարունակական բարելավումը ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման միջոցով: Միաժամանակ շարունակաբար ուղղորդում է ՄԿՈՒ հաստատություններին հավատարմագրման արդյունքների ռազմավարական կիրառման և որակի ներքին ապահովման (ՈՆԱ) գործընթացների բարելավման համար: Ներկայումս ՄԿՈՒ հաստատությունների ՈՆԱ համակարգը զարգացման փուլում է: Մեծ թվով հաստատություններ ունեն ՈՆԱ պատասխանատուներ: Որակի ներքին ապահովման գործընթացները հաստատության կրթական գործունեության անբաժանելի մասն են և հիմք են վերջինիս բարելավման և ամրապնդման համար: Որակի ապահովման պատասխանատուների կարողությունների բարելավումը շարունակում է մնալ կարևոր մարտահրավեր: Ներկայումս որակի ներքին ապահովման գործընթացների իրականացման հիմնական մեխանիզմները սահմանափակված են հարցումներով և դասալսումներով: Համակարգի աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու համար անհապաղ անհրաժեշտ է բազմազանեցնել այս մեխանիզմները: ՈԱԱԿ–ի փորձը նաև ցույց է տալիս, որ ՄԿՈՒ ՈՆԱ համակարգը պետք է կարևորի այն ցուցիչները, որոնք միտված են բարելավելու զբաղվածության վրա հիմնված գնահատման գործընթացը:

ՄԿՈՒ չափորոշիչներ և ուսումնական պլաններ

ՄԿՈՒԶԱԿ–ը պատասխանատու է ՄԿՈՒ չափորոշիչների և ՄԿՈՒ հաստատությունների մոդուլային ծրագրերի մշակման համար: **Չափորոշիչների** մշակման և վերանայման գործընթացն իրականացվում է ՄԿՈՒԶԱԿ–ի ձևավորած աշխատանքային խմբերի կողմից, որոնցում ընդգրկված են 5-7 ներկայացուցիչներ պետական մարմիններից, կազմակերպություններից, կրթական հաստատություններից, սոցիալական գործընկերներից և գործատուներից: Նախքան հաստատումը կրթական չափորոշիչների նախնական տարբերակը գնահատվում է ՄԿՈՒԶԱԿ-ի և ոլորտային հանձնաժողովների կողմից: ՄԿՈՒԶԱԿ-ն իրականացնում է գնահատում տեխնիկական և ձևաչափային տեսանկյունից, իսկ ոլորտային հանձնաժողովները՝ բովանդակային: Եթե դիտարկման արդյունքները դրական են, չափորոշիչները պաշտոնապես հաստատվում են Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի կողմից:

ՄԿՈՒ պետական չափորոշիչը սահմանում է.

- որակավորման ընդհանուր բնութագիրը (ՈԱԾ մակարդակ, ուսուցման ձև և տևողություն, ուսանողների նվազագույն և առավելագույն ծանրաբեռնվածություն),
- մասնագիտական գործունեության նկարագիրը (համապատասխան մասնագիտական պարտականություններ),
- կրթության և ուսուցման կազմակերպման պահանջներ ու օրինակելի ուսումնական պլան,
- դասախոսին ներկայացվող պահանջներ և նյութական ռեսուրսներ:

ՄԿՈՒ հաստատությունները պատասխանատու են կրթական չափորոշիչները տեղի գործատուների կարիքներին համապատասխանեցնելու համար:

Ուսումնական պլանները նախանշում են մոդուլների տարեկան բաշխումը, քննությունների տեսակները և ուսանողների պարտադիր ծանրաբեռնվածությունը, որը ներառում է դասախոսություններ, լաբորատոր և գործնական աշխատանքներ:

Մոդուլային ծրագիրը սահմանում է դասընթացի նպատակները, տևողությունը, մուտքային պահանջները, ակնկալվող ուսումնառության արդյունքները (ԱՈՒԱ), յուրաքանչյուր ԱՈՒԱ-ի կատարման չափանիշները, գնահատման, դասավանդման մեթոդները և անհրաժեշտ ռեսուրսները:

Մոդուլների ուսումնառության արդյունքները սահմանում են այն գիտելիքները, հմտությունները և կարողությունները, որոնք ուսանողը պետք է ձեռք բերի մոդուլի ավարտին: Կախված մոդուլի ծավալից՝ կարող են լինել 3-8 ուսումնառության արդյունքներ:

Յուրաքանչյուր ակնկալվող ուսումնառության արդյունքի համար մոդուլները սահմանում են մի շարք կատարման չափանիշներ: Այս չափանիշները մանրամասն ներկայացնում են, թե ինչ պետք է անեն ուսանողները՝ ակնկալվող ուսումնառության արդյունքներին հասնելու համար: Օրինակ՝ «Քույրական գործ» ՄԿԾ-ի շրջանակներում մոդուլի կատարման չափանիշը սահմանում է. «ուսանողը պետք է կարողանա անհապաղ օգնություն ցուցաբերել ուշաթափվածին»: Կատարման չափանիշների հիման վրա ՄԿՈՒ հաստատություններն առաջադրանքներ և գնահատման թերթիկներ են մշակում ուսանողի ձեռքբերումները գնահատելու համար:

Լուսանկարներ. ձախից աջ՝ Վրաստանի կրթության որակի զարգացման ազգային կենտրոնի ներկայացուցիչներ Քեթևան Չիշխելի և Գախաբեր Երաձե, ETF ներկայացուցիչ Լիա Կարլոպ, Սերբիայի որակավորման գործակալության ներկայացուցիչներ Կալավ Միտրովիչ և Իվանա Յվորովիք Պլավզիք

Լուսանկարներ. ձախից աջ՝ Կոսովոյի ազգային որակավորման գործակալության ներկայացուցիչ Արբեր Սալիհու, Իսրայելի կրթության նախարարություն ներկայացուցիչ Յարոն Դոպելտ

Թեմայի առանցքը՝ ձևավորող գնահատում

Թեմատիկ ուղղվածությունը շեշտադրելու և ձևավորող գնահատման լավագույն փորձի մասին իրազեկվածությունը բարձրացնելու նպատակով՝ ETF–ի նորարարական կրթության և ուսուցման փորձագետ Ջոլիեն վան Ուդենը որակի ապահովման ֆորումի անդամներին ներկայացրել նոր առցանց գործիք՝ ETF-ի կողմից մշակված ձևավորող գնահատման մոդել ՄԿՈՒ հաստատությունների համար: Այս մոդելը նախ սահմանում է ձևավորող գնահատումը, որն, իր հիմնական նպատակով պայմանավորված, հաճախ կոչվում է նաև «սովորեցնող գնահատում» և ուղղված է ուսումնառության գործընթացի խթանմանն ու բարելավմանը: Ձևավորող գնահատումն առանձին խնդիր կամ գործողություն չէ. ուսումնառությանը զուգահեռ և դրա շրջանակում իրականացվող գործընթաց է՝ միտված ուսումնառության աջակցմանը և բարելավմանը: Այն շարունակական և պարբերաբար տրվող արձագանք է, որը նպաստում է սովորողների փոփոխվող կարիքների բավարարմանը: Ձևավորող գնահատումն ուսուցման և ուսումնառության անբաժանելի մաս է, ոչ թե առանձին գործընթաց:

Մոդելը ներկայացնում է ձևավորող գնահատման բազմակողմանի բնույթը և առանձնացնում 6 հիմնական բաղադրիչներ.

1. կազմակերպչական մշակույթի ձևավորում՝ խթանելու դասախոսների և ուսանողների փոխգործակցությունն ուսումնական գործընթացի բարելավման նպատակով,

2. սովորողների համար գնահատողների դերը ստանձնելու հնարավորություն,

3. համատեղ ուսումնառության/խնդիրների լուծման նպատակների և հաջողության չափանիշների սահմանում,

4. առաջընթացի գնահատում ուսումնառության և գնահատման տարբեր գործընթացների ու արդյունքների հիման վրա,

5. արդյունավետ հետադարձ կապի ապահովում և ստացում,

6. հետադարձ կապի կիրառումը ուսուցման և ուսումնառության բարելավման, թերությունների վերացման և ուսումնառության կարիքների բավարարման նպատակով:

Մոդելը հիմնված է քաղաքականություն մշակողներին ու ՄԿՈՒ հաստատություններին ներկայացված մի շարք խորհրդատվությունների վրա և ուղղված է ՄԿՈՒ ոլորտում ձևավորող գնահատման խթանմանը: Ստորև ներկայացված են որակի ապահովման միջոցառումներին առնչվող որոշ խորհրդատվություններ.

- ձևավորող գնահատումը պետք է դառնա ընդհանուր գնահատման համակարգի բաղկացուցիչ մաս, հետևաբար այն անհրաժեշտ է ներառել կրթության հիմնական տեսլականին համահունչ երկարաժամկետ ռազմավարություններում,

- գործատուները պետք է ներգրավվեն գնահատման նոր մոտեցումների հստակեցման և համապատասխանեցման գործընթացին,

- մանկավարժներին պետք է տալ ինքնավարություն, ինչպես նաև տրամադրել ռեսուրսներ ու մասնագիտական ուսուցման հնարավորություններ՝ գնահատման նոր մեթոդներ որդեգրելու համար,

- ՄԿՈՒ հաստատությունները շահակիցների հետ համատեղ պետք է ստեղծեն ձևավորող գնահատման ընդհանուր տեսլական,

- անհրաժեշտ է ապահովել չափորոշիչների, ուսումնական պլանների և գնահատման մեթոդների միջև համապատասխանությունը,

- արդարության և ներառականության սկզբունքներով առաջնորդվող գնահատման գործընթացների վերաբերյալ հետազոտության արդյունքները և լավագույն փորձը (օրինակ՝ աշխատաժողովների և գործընկերային ուսուցման միջոցով) պետք է լայնորեն տարածվեն և հասանելի դառնան,

- մանկավարժներ նախապատրաստող կրթական ծրագրերը պետք է ներառեն գնահատման ավելի բազմազան մեթոդներ:



Լուսանկարներ. ձախից աջ՝ Հյուսիսային Մակեդոնիայի ազգային կոնտակտային անձ Գորան Սպասովսկի, Սերբիայի որակավորման գործակալության ներկայացուցիչ Իվանա Յվորովիք Պլավզիք, Հորդանանի Տեխնիկական և մասնագիտական հմտությունների զարգացման հանձնաժողովի ներկայացուցիչ Մոհամմադ Թահսին Ալի Ալնաուայսե

Գործընկերային այցի թիրախը՝ ձևավորող գնահատման որակի ապահովումը

ՈԱԱԿ-ը խրախուսում է ՄԿՈՒ հաստատություններին գնահատման մոտեցումների բարելավման և զբաղվածությանը միտված դարձնելու հարցում, քանի որ որոշ ոլորտներում կրթությունն առավել տեսական է: ՈԱԱԿ–ն ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացն ու շրջանակն օգտագործում է՝ շեշտը դնելով ձևավորող գնահատման վրա: Նպատակն է աստիճանաբար բարելավել առկա գնահատման համակարգերը և վեր հանել օրինակելի փորձեր, որոնք ցույց են տալիս գործատուի ներգրավվածությունն ուսանողների գնահատման գործընթացում:

Այս շրջանակի միջոցով ՈԱԱԿ-ը խրախուսում է արտաքին փորձագետներին խորությամբ ուսումնասիրել ՄԿՈՒ հաստատությունների ձևավորող գնահատման փորձը, ինչը կօգնի հասկանալ նրանց մոտեցումները և փորձի բարելավմանն ուղղված առաջարկություններ ներկայացնել:

ՈԱԱԿ-ը խրախուսում է ՄԿՈՒ հաստատություններին ներկայացնել նաև գնահատման առաջադրանքները և ձևավորող գնահատմանն առնչվող նյութերը՝ հնարավոր բարելավումների վերաբերյալ մանրամասն արձագանքներ ստանալու համար:

Ավելին, ՈԱԱԿ-ն ակտիվորեն խրախուսում է գործատուների մասնակցությունը թե՛ ուսուցման, թե՛ գնահատման գործընթացներին՝ ապահովելու շրջանավարտների կարողությունների համապատասխանությունը գործատուի պահանջներին: Մասնավորապես, ծրագրային հավատարմագրման չափանիշների առանցքում է ուսանողների գնահատման համակարգը: Ծրագրային հավատարմագրման միջոցով դիտարկվում է, թե որքանով է գնահատման համակարգը հուսալի ակնկալվող ուսումնառության արդյունքների ձեռքբերման տեսանկյունից և արդյոք առկա են դասախոսների, ուսանողների համար մշակված գնահատման չափանիշներ կրթական ծրագրի

շրջանակներում: Տրամադրվող կրթության արդյունավետությունը գնահատելու նպատակով՝ ինստիտուցիոնալ հավատարմագրման շրջանակներում իրականացվում է երեք մասնագիտական կրթական ծրագրերի գնահատում՝ (երկու կրթական ծրագիր առաջարկվում է ՄԿՈՒ հաստատության կողմից, մեկն ընտրում է ՈԱԱԿ–ը՝ հաշվի առնելով երկրի ռազմավարական առաջնահերթությունները):

Արտաքին փորձագետները դիտարկում են կրթական ծրագրի բովանդակությունը և ուսանողներին տրվող առաջադրանքները մասնագիտական մոդուլների շրջանակներում՝ գնահատելով վերջիններիս համապատասխանությունը ծրագրի ակնկալվող ուսումնառության արդյունքներին և արդիականությունը գործնական կիրառելիության տեսանկյունից: Իրականացնում են նաև դասալսումներ, այցելում պրակտիկայի անցկացման վայրեր, մասնակցում ուսանողների ամփոփիչ ատեստավորմանը (կախված ուսումնական պլանից): Այս գործընթացներն օգնում են պարզել, թե հնարավոր է գնահատել ծրագրի ակնկալվող ուսումնառության արդյունքները դասախոսների կողմից իրականացվող աշխատանքի միջոցով, որոշել՝ արդյոք բոլոր ԱՈՒԱ-ներն են գնահատվում և որքանով են ուսանողներին տրվող արձագանքները ժամանակին ու հիմնված կատարման չափանիշների վրա:

Փորձագիտական այցի ընթացքում փորձագետները վարում են մասնագիտական զրույց–քննարկումներ: Նպատակն է կրթական ծրագրերի պատասխանատուների, դասախոսների և ուսանողների հետ քննարկել ներկայացված երեք ՄԿԾ-ների շրջանակներում ուսանողներին տրվող հանձնարարականների դիտարկման արդյունքում դուրս բերված հարցերը:

Փորձագիտական խմբի ձևավորումը և պատրաստումը

Փորձագիտական խմբերը բաղկացած են դասախոսական կազմի ներկայացուցիչներից, կրթության կառավարման և/կամ որակի ապահովման մասնագետներից, մասնագիտական կամ տնտեսության տվյալ ոլորտի ներկայացուցիչներից/գործատուներից: Փորձագիտական խմբերում ընդգրկվում է մեկ ուսանող: Փորձագիտական խմբի ղեկավարը պետք է ունենա ՈԱԱԿ հավատարմագրման գործընթացների մասնակցության փորձ: Փորձագետներն ընտրվում են ինստիտուցիոնալ հավատարմագրման շրջանակներում ընտրված մասնագիտական կրթական ծրագրերի ոլորտներին համապատասխան:

Վերապատրաստումների միջոցով ՈԱԱԿ-ը փորձագետներին պատրաստում է հավատարմագրման համար: Վերապատրաստումների նպատակն է ինստիտուցիոնալ հավատարմագրման փորձաքննության հաջող իրականացումը: Վերապատրաստումների ընթացքում կազմակերպվում են դերախաղեր, որոնց ընթացքում վերապատրաստվողները գնահատում են ուսանողների համար նախատեսված իրական առաջադրանքները (առանց հաստատության անվանման), կազմում հարցեր և անցկացնում փորձագիտական այց՝ ստանձնելով փորձագիտական խմբի դերը և հարցեր ուղղելով ուսանողներին ու դասախոսներին: ՈԱԱԿ անձնակազմը մասնակցում է դերախաղերին: Վերապատրաստվողներին սովորեցնում են քննադատաբար գնահատել, թե որքանով և ինչպես է ՄԿՈՒ հաստատություններում իրականացվում ձևավորվող գնահատում՝ նպաստելով ուսանողներին որպես աշխատուժ պատրաստելուն: Փորձագետները վերապատրաստումների ընթացքում քննարկումներ են ունենում, արձագանքներ ստանում ՈԱԱԿ աշխատակիցների և համակարգողների կողմից:

Լուսանկարներ. ձախից աջ՝ ՈԱԱԿ ներկայացուցիչներ Անահիտ Տերտերյան, Լիանա Ալավերդյան, Վարդուհի Գյուլազյան

Գնահատման գործընթացի ըմբռնում. պարզաբանումներ ներգրավված դերակատարներից

Որակի ապահովման իրականացման վերաբերյալ համապարփակ պատկերացում կազմելու և գործընթացն իրականացնողներից ու շահակիցներից տեղեկատվություն ստանալու նպատակով անցկացվել են մի շարք պանելային քննարկումներ, որոնք վարել են ՄԿՈՒ ՈԱ ֆորումի համակարգող, ՄԿՈՒ քաղաքականությունների մասնագետ, ETF ավագ մասնագետ Մունիր Բաատին և կրտսեր մասնագետ տիկին Նադեժդա Սոլոդյանկինան, ինչպես նաև Վրաստանի ներկայացուցիչ Կախաբեր Էրաձեն։

Այցի առաջին և երկրորդ օրերին իրենց փորձով են կիսվել հայաստանյան ներկայացուցիչները.

Լուսանկարները. ձախից աջ՝ Մոնտենեգրոյի ՄԿՈՒ ազգային կենտրոնի ներկայացուցիչ Վլադիսլավ Կոպրիվիցա, Ալբանիայի միջին մասնագիտական կրթության և ուսուցման և որակավորումների ազգային գործակալության ներկայացուցիչ Դիանա Ջելիլի

Մասնագիտական զրույց–քննարկումներ «Ատամնատեխնիկական գործ» ՄԿԾ–ի դասախոս-գործատուների և ուսանողների հետ – Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի քոլեջ

Լուսանկարներ. ձախից աջ՝ մասնագիտական զրույց–քննարկումներ Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի քոլեջի «Ատամնատեխնիկական գործ» կրթական ծրագրի դասախոս-գործատուների և ուսանողների հետ, 21.05.2024

Լուսանկար. Ֆրանս-հայկական մասնագիտական ուսումնական կենտրոնի խոհարարական լաբորատորիա, 22.05.2024

Պանելային քննարկում ՄԿՈՒ համակարգի քաղաքականություն մշակողների հետ

Լուսանկար. Տաթևիկ Գասպարյան, Արմենուհի Պողոսյան, Ռուզաննա Պեպանյան, Մանե Խալաթյան

Արմենուհի Պողոսյան – ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության վարչության պետ,
Տաթևիկ Գասպարյան - Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային կենտրոնի տնօրեն,
Ռուզաննա Պեպանյան - Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության զբաղվածության բաժնի, պետ
Մանե Խալաթյան - ՀՀ էկոնոմիկայի նախարարության գիտելիքահենք տնտեսության վարչության ավագ մասնագետ:

Պանելային քննարկում արտաքին գնահատում իրականացնող փորձագետների հետ

Արմենուհի Միհերյան - Հայաստանի Եվրոպական համալսարանի ֆինանսների ամբիոնի վարիչ,
Քրիստինե Հակոբյան - Կոտայքի պետական տարածաշրջանային քոլեջի տնօրենի տեղակալ,
Ասյա Սիմոնյան - Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարանի դասախոս,
Ելենա Մարտիրոսյան - Ֆրանս-հայկական մասնագիտական ուսումնական կենտրոնի տնօրենի տեղակալ,
Մերի Սարգսյան - Երևանի պետական հենակետային բժշկական քոլեջի տնօրենի տեղակալ,
Արամ Հակոբյան - Երևանի պետական հենակետային բժշկական քոլեջի ուսանող:

Լուսանկար. ձախից աջ՝ Արամ Հակոբյան, Քրիստինե Հակոբյան, Արմենուհի Միհերյան, Ասյա Սիմոնյան, Ելենա Մարտիրոսյան, Մերի Սարգսյան

Պանելային քննարկում գործատուների հետ

Դավիթ Գրիգորյան - Տեսվան ՏՏ ընկերություն տնօրեն,
Խաչիկ Սահակյան – Ֆերտի բարեգործական կենտրոնի տնօրեն,
Ժորա Մովսիսյան - «Ալեքս Տեքստիլ» ընկերության համահիմնադիր,

Գեղանուշ Ստեփանյան – Միքայելյան վիրաբուժության ինստիտուտի ավագ բուժքույր,
Սոնա Եղիազարյան - «Մարի» տուրիստական գործակալության աշխատակից:

Լուսանկար. ձախից աջ՝ Ժորա Մովսիսյան և տիկին Գեղանուշ Ստեփանյան

Պանելային քննարկում ՄԿՈՒ հաստատությունների տնօրենների և փոխտնօրենների հետ

Մարինե Հակոբյան - Երևանի պետական հումանիտար քոլեջ տնօրենի ներկայացուցիչ,
Վահե Բաբայան - Երևանի Մեհրաբյանի անվան բժշկական քոլեջի տնօրեն,
Ռոբերտ Աբրահամյան - Երևանի Ինֆորմատիկայի պետական քոլեջի տնօրեն,
Հասմիկ Մաթևոսյան - Սևանի բազմագործառութային պետական քոլեջի փոխտնօրեն,
Անուշ Մկրտչյան - Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի փոխտնօրեն:



Լուսանկարներ. ձախից աջ՝ Մարինե Հակոբյան, Ռոբերտ Աբրահամյան, 22.05.2024.

Մասնագիտական զուգահեռ զրույց–քննարկումներ «Ատամնատեխնիկական գործ», «Խոհարարական գործ», «Կարի արտադրության տեխնոլոգիա» ՄԿԾ–ների դասախոս-գործատուների և ուսանողների հետ

Լուսանկար. Ֆրանս-հայկական մասնագիտական ուսումնական կենտրոնի ուսանողները լաբորատորիայում, 22.05.2024

Պանելային քննարկում դասախոս-գործատուների և դասախոսների հետ

Լուսանկարներ. ձախից աջ՝ Երևանի Մեհրաբյանի անվան բժշկական քոլեջի տնօրեն Վահե Բաբայանը դասախոսի և ուսանողի հետ

Վլադիմիր Բագրատունի - Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի դասախոս-գործատու,

Արմինե Հարությունյան - Փ. Թերլեմեզյանի անվան գեղարվեստի պետական քոլեջի դասախոս-գործատու,

Դավիթ Շահվերդյան - Վանաձորի պետական բժշկական քոլեջի դասախոս-գործատու /բժիշկ/,
Սարգիս Կարապետյան - «Պրոգրես» բժշկական համալսարանի քոլեջի դասախոս-գործատու,
Քաջիկ Ավետիսյան - Երևանի Ինֆորմատիկայի պետական քոլեջի դասախոս,
Արմինե Մելիքսետյան - Լոռու տարածաշրջանային պետական քոլեջի դասախոս:

Պանելային քննարկում ՄԿՈՒ կրթական ծրագրերի ղեկավարների, կարիերայի պատասխանատուների և որակի ներքին ապահովման պատասխանատուների հետ

Լիանա Ամիրխանյան - Երևանի Ն. Աճեմյանի անվան տարածաշրջանային N 2 պետական քոլեջի կարիերայի կենտրոնի պատասխանատու,
Լուսիկ Մանուչարյան - Երևանի հենակետային բժշկական քոլեջի մասնագիտական կողմնորոշման և կարիերայի ուղղորդման պատասխանատու,
Լիլիթ Աբելյան – Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի որակի ներքին ապահովման պատասխանատու,
Մարիամ Հովհաննիսյան - Էջմիածնի Վարդգես Համազասպյանի անվան պետական քոլեջի որակի ներքին ապահովման պատասխանատու,
Աշոտ Ավետիսյան - Երևանի Ինֆորմատիկայի պետական քոլեջի կրթական ծրագրի ղեկավար,
Լուսինե Գալոյան - Մարտունու պետական բժշկական քոլեջի կրթական ծրագրի ղեկավար:

ՄԿՈՒ կրթական ծրագրերի ղեկավարներ, կարիերայի և որակի ներքին ապահովման պատասխանատուներ՝ Աշոտ Ավետիսյան, Լուսիկ Մանուչարյան, Լիանա Ամիրխանյան, Լիլիթ Աբելյան, Մարիամ Հովհաննիսյան, Լուսինե Գալոյան

Լուսանկար. արտաքին գործընկերները և ուսանողները Ֆրանս-հայկական մասնագիտական ուսումնական կենտրոնի կարի արտադրության տեխնոլոգիայի լաբորատորիայում, 22.05.2024

Մասնագիտական զուգահեռ զրույց քննարկումներ «Խոհարարական գործ», «Դերասանական արվեստ» ՄԿԾ–ների գործատու-դասախոսների և ուսանողների հետ, Երևանի տարածաշրջանային N1 պետական քոլեջ

Լուսանկար. արտաքին գործընկերները Ֆրանս-հայկական մասնագիտական ուսումնական կենտրոնում, 22.05.2024

Լուսանկար. Երևանի տարածաշրջանային N1 պետական քոլեջի ուսանողները լաբորատորիայում, 22.05.2024

Գործընկերային այց – փուլ երրորդ, արտաքին գործընկերների արձագանք

Երրորդ փուլում արտաքին գործընկերներին ժամանակ է տրվում գործընկերային այցի վերաբերյալ արձագանք պատրաստելու և հյուրընկալող հաստատությանը տրամադրելու համար:

Գործընկերային այցի մեթոդաբանություն – փուլ 3 – արտաքին գործընկերների արձագանք

Ներգրավված դերակատարների համար կարևորությունը

Հյուրընկալող կողմ

- ստանալ գործընկերային գնահատում ազգային մակարդակով իրականացվող որոշակի գործընթացների վերաբերյալ:

Այցն իրականացրած գործընկերներ

- ծանոթանալ որակի ապահովման գնահատման ենթակա թեմաների վերաբերյալ գործընկերների ներկայացրած տարբեր դիտարկումներին և վերլուծություններին,
- միջազգային փորձագիտական խմբի մաս դառնալ և ակտիվորեն մասնակցել որակի ապահովման գնահատման ենթակա թեմաների քննարկումներին:

Անհատական գործընկերային արձագանքի պատրաստում

Փաստերի և ապացույցների հիման վրա գործընկերները բացահայտել են **ուժեղ կողմերն** ու **բարելավման ոլորտները՝** առանցքում ունենալով հյուրընկալող հաստատությանը առավել վերլուծական,

կառուցողական և մոտիվացնող արձագանքներ տրամադրելու անհրաժեշտությունը: Գործընկերները հրավիրվել են նաև ներկայացնելու բարելավմանը միտված խորհրդատվություններ՝ հաշվի առնելով հյուրընկալող երկրի կողմից սահմանված գնահատման երեք հարցերը.

- Արդյո՞ք որակի արտաքին ապահովման միջոցառումներն արդյունավետորեն են ազդում ձևավորող գնահատման որակի վրա և ինչպե՞ս կարող են բարելավվել ՈԱԱԿ միջոցառումները:

- Ինչպե՞ս կարելի է խթանել ձևավորող գնահատման արդյունավետ փորձերի ինտեգրումը ՄԿՈՒ համակարգում: Ի՞նչ տարրերի պետք է առաջնահերթություն տալ այս նպատակով:

- Տրամադրել ընդհանուր վերլուծություն Հայաստանում որակի ապահովման համակարգի վերաբերյալ:

Գործընկերների տրամադրած արձագանքների առանցքային կետերը ներկայացված են ստորև: Դրանք արտացոլում են որակի ապահովման ETF ֆորումին մասնակցած առանձին անդամների տեսակետները:

Ուժեղ կողմեր

Ձևավորող գնահատում

- ՄԿՈՒ հաստատություններում առկա են սովորողների ձևավորող գնահատման լավագույն փորձեր:

- Ձևավորող գնահատումը ներառված է որակի ապահովման ներքին և արտաքին մեխանիզմներում՝ որպես ուսանողների գնահատման մաս:

ՄԿՈՒ որակի ապահովում

- ՈԱԱԿ-ն ունի որակի արտաքին ապահովման փորձված ու հուսալի շրջանակ (ընդգրկում է ինչպես ներքին, այնպես էլ արտաքին որակի ապահովումը), որտեղ ձևավորող գնահատումն ուսանողների գնահատման մաս է կազմում: Այն նպաստում է մոտիվացված, ոլորտային դասախոսների գործունեության ազատությանը և ուղղված է հաստատությունների աջակցմանն ու զարգացմանը, ոչ թե զուտ վերահսկողությանը: Որակի ապահովման օրենսդրական դաշտը նախատեսում է ավելի մեծ ուշադրություն հատկացնել ուսումնառության արդյունքների որակի և ՄԿՈՒ ոլորտի կողմից թողարկվող աշխատուժի որակի վրա: Միևնույն ժամանակ, ՈԱԱԿ-ը ձգտում է ապահովել որակի շարունակական բարելավումը: Հետագա բարելավման անհրաժեշտության գիտակցումը վկայում է ուժեղ ներքին համակարգի մասին:

- Հայաստանում որակի ապահովման համակարգի զարգացմանն էապես նպաստում է համապարփակ մոտեցումը, որը ներառում է կրթության որակի տարբեր ասպեկտներ՝ ուսումնական պլանների մշակում, դասավանդման մեթոդաբանություններ, ուսանողների աջակցության ծառայություններ, հետազոտական գործունեություն և այլն:

- Առանձնակի կարևորություն ունի շահակիցների ներգրավվածությունը: ՈԱԱԿ-ը խթանում է մասնակցային մոտեցումը, որը հիմնված է ՄԿՈՒ որակի ապահովման բոլոր շահակիցների, այդ թվում՝ դասախոսների, ուսանողների և գործատուների ներգրավվածության վրա: Այսպիսի մոտեցումը բարձրացնում է ՄԿՈՒ որակի ապահովման արդյունավետությունը: 2030թ. ազգային ռազմավարությունն աջակցում է գործատուների ներգրավվածությունը ՄԿՈՒ ծրագրերի իրականացմանը:

- Հայաստանում ՄԿՈՒ հաստատությունները պատասխանատվություն են ցուցաբերում որակի ապահովման գործընթացների նկատմամբ: Յուրաքանչյուր հաստատություն ունի որակի պատասխանատու, որը զբաղվում է որակի ներքին ապահովման, ներառյալ՝ ներքին գնահատման պլանավորման և իրականացման գործընթացներով:

- Որակի բարելավման շեշտադրումը նկատելի է ողջ համակարգում և դրա հիմնական դերակատարների (դասախոսներ, սովորողներ, գործատուներ, կրթական հաստատություններ, պետական պաշտոնյաներ) շրջանում:

<u>ՄԿՈՒ զարգացում</u>

- Համակարգի ընդհանուր ճկունությունը թույլ է տալիս կազմակերպություններին ներգրավվել ուսումնական պլանների մշակման գործընթացին և մասնակցել վերապատրաստումների:

- Գործատուները պատրաստակամ են մեծացնելու իրենց ներդրումը հմտությունների զարգացման գործում:

- ՀՀ ՄԿՈՒ համակարգը տրամադրում է ուսումնառության տևողության, ծրագրերի և ուղղությունների ընտրության լայն հնարավորություն՝ ապահովելով, որ տարբեր սովորողներ գտնեն իրենց կարիքներին համապատասխան տարբերակը:

Լուսանկար. գործընկերների արձագանքների շուրջ ազգային շահակիցների հետ քննարկում, որը վարել է Նադեժդա Սոլոդյանկինան, ETF, ՈԱԱԿ, 23.05.2024

Բարելավմանը ենթակա ոլորտներ և խորհրդատվություններ

<u>Ձևավորող գնահատում</u>

- Ձևավորող գնահատման լավ փորձը տարածել ողջ ՄԿՈՒ համակարգում՝ այդպիսով նպաստելով քաղաքականության և ռազմավարության մեջ ձևավորող գնահատման ինտեգրմանը և հաստատությունների համար հստակ գործիքների մշակմանը:

- Ձևավորող գնահատման հստակ չափորոշիչների և ուղեցույցների մշակումը հնարավորություն կընձեռի ՄԿՈՒ հաստատություններին չափել գործընթացների որակը և ձևավորող գնահատման արդյունքները: Այդ ուղեցույցները պետք է խրախուսեն ձևավորող գնահատման համար թվային գործիքների ներդրումը և աջակցեն դրանց արդյունավետ կիրառման թեմայով

վերապատրաստումների կազմակերպմանը: Դրանք պետք է խթանեն գնահատումները, որոնք հիմնված են մասնագիտական ոլորտի գործնական խնդիրների ու մարտահրավերների լուծման վրա: Այս մոտեցումը գնահատման գործընթացը դարձնում է առավել բովանդակալից և գործնական ուսանողների համար: Չափորոշիչները և ուղեցույցները պետք է նաև խրախուսեն ուսանողների ակտիվ մասնակցությունը ձևավորող գնահատման գործընթացին, որը ներառում է ինքնուրույն ուսումնառությունը խթանող ինքնագնահատում, փոխադարձ գնահատում և վերլուծություններ: Ուսանողներին տրամադրվող հետադարձ կապը պետք է դառնա այս մոտեցման մի մասը:
Գնահատման համակարգերը պետք է ապահովեն բավարար ճկունություն՝ ուսանողների բազմազան կարիքներին արձագանքելու և տարբեր մասնագիտական ոլորտների համատեքստին համապատասխանելու համար: Հարկավոր է ազգային մակարդակով իրականացնել հետազոտություններ՝ ուսումնասիրելու ձևավորող գնահատման տարբեր մեթոդների արդյունավետությունն ու որակի ապահովման ազդեցությունը գնահատման գործընթացների բարելավման վրա:

- Տրամադրել դասախոսական կազմին հետադարձ կապ ձևավորող գնահատման իրականացման վերաբերյալ՝ հնարավորություն տալով դասախոսական կազմին առավել արդյունավետ կազմակերպել ձևավորող գնահատմանն (սանդղակներ, մեթոդներ) ուղղված հետագա քայլերը:

- ՄԿՈՒ ոլորտում ձևավորող գնահատման ռազմավարությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ է հստակ սահմանել հիմնական դերակատարների պատասխանատվությունները: Սա կօգնի ուսումնական հաստատություններին, ուսանողներին և գործատուներին ավելի արդյունավետ համագործակցել՝ ապահովելով, որ ուսանողները լիարժեք ներգրավված լինեն գնահատման գործընթացում, ինչը կարևոր նախապայման է հաջողության համար: Կանոնակարգող փաստաթղթերը պետք է առավել մանրամասն ներկայացնեն ՄԿՈՒ հաստատությունների և կազմակերպությունների համագործակցության շրջանակը՝ հստակ սահմանելով բոլոր դերակատարների իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև ստեղծելով համապատասխան մեխանիզմներ և գործիքներ ուսուցման, ուսումնառության և գնահատման աջակցման համար: Դա հնարավորություն կտա համագործակցության ընդհանուր հիմքեր ձևավորել:

- Որակի ապահովման մեխանիզմների միջոցով ազդել ձևավորող գնահատման արդյունավետության վրա: Պետք է շարունակաբար գնահատել ձևավորող գնահատման փորձի արդյունավետությունը և անհրաժեշտության դեպքում կատարել համապատասխան փոփոխություններ: Այս գործընթացը հնարավոր է իրականացնել՝ հավաքագրելով մանկավարժների, ուսանողների և ոլորտային գործընկերների հետադարձ կապը և կիրառելով այն բարելավման նպատակով:

- Ապահովել դասախոսների և գնահատողների (հաստատության և կազմակերպությունների) կարողությունների զարգացումը՝ հաշվի առնելով նրանց կարիքներն ու ոլորտային պահանջները, ինչպես նաև կիրառելով առաջընթացի գնահատման տարբեր մոտեցումներ և գործիքներ: Աջակցել գործընկերային գնահատման գործընթացներում ներգրավված դասախոսների ցանցի ստեղծմանը և գնահատման կարողությունների զարգացմանը միտված ֆորումների կազմակերպմանը: Դասախոսների համար կարելի է մշակել վերապատրաստման համապարփակ ծրագրեր՝ առանցքում ունենալով ձևավորող գնահատման լավագույն փորձերի տարածումը և դրանց համապատասխանության ապահովումը որակի ապահովման չափորոշիչներին (այդ թվում՝ գնահատման նորարարական մեթոդների և տվյալահենք որոշումների կայացմանն ուղղված ծրագրեր): Կարող է մշակվել դասախոսների մասնագիտական զարգացման վերապատրաստումների ցանկ, որը կներառի նաև վերապատրաստումներ ուսանողների ձևավորող գնահատման և մշտադիտարկման գործընթացների վերաբերյալ: ՄԿՈՒ հաստատությունների դասախոսների համար կարող են մշակվել և հաստատվել մասնագիտական չափորոշիչներ, որոնք կսահմանեն պահանջներ, որ գործնական հմտություններ դասավանդողներն ակտիվ ներգրավվածություն ունենան իրենց

ոլորտում և տիրապետեն ուսանողների գնահատման մեթոդաբանությանը: Կարելի է նշանակել դասախոս-առաջնորդներ, որոնք երկրում կծավալեն կարևոր գործունեություն՝ աջակցելով մյուս դասախոսներին ժամանակակից ուսումնական նյութերի մշակման, ուսուցման մեթոդների բարելավմանը միտված աշխատանքների և այլ գործընթացների իրականացման գործում:

<u>ՄԿՈՒ որակի ապահովում</u>

- Ոլորտի կարիքներին համապատասխան հստակ չափորոշիչների մշակումն անհրաժեշտ է՝ ուսումնառության արդյունքները և գնահատման չափանիշները փոխկապակցելու համար: Գնահատման չափանիշները կարող են դառնալ կրթական չափորոշիչների անբաժանելի մասը՝ սահմանելով կատարողականի բավարար մակարդակը ոլորտային մասնագետի համար: Ապահովել, որ ձևավորող գնահատումները հստակորեն համապատասխանեն ՄԿՈՒ ծրագրերի ուսումնառության արդյունքներին: Որակի ազգային չափորոշիչները պետք է արտացոլեն գնահատման գործընթացին ներկայացվող պահանջները և ուսանողի առաջադիմության արդյունքները:

  Կրթական չափորոշիչներն արդեն իսկ սահմանում են ուսումնառության արդյունքները՝ այն, ինչ ուսանողը պետք է իմանա և կարողանա անել առարկայի/մոդուլի կամ ծրագրի ավարտին: Անհրաժեշտ է սահմանել գնահատման հստակ և միասնական չափանիշներ ողջ երկրի մակարդակով՝ ապահովելու ուսումնառության արդյունքների ձեռքբերումը, ինչը պետք է դառնա դիպլոմների շնորհման նախապայման: Գնահատման գործընթացը պետք է լինի. 1. Հուսալի, այսինքն՝ նպատակահարմար ուսումնառության որոշակի արդյունքների գնահատման համար (օրինակ՝ գործնական հմտությունները չեն կարող գնահատվել միայն բանավոր կերպով կամ գրավոր՝ թեստային եղանակով): 2. Հավաստի, այսինքն՝ ուսումնառության արդյունքների ձեռքբերման վերաբերյալ առկա են հստակ փաստեր, օրինակ՝ իրականացված գործընթացներ, գրավոր քննություններ, աուդիո կամ վիդեո ձայնագրություն և այլն: Արտաքին գնահատողը (ցանկալի է կազմակերպության ներկայացուցիչը) պետք է համոզվի, որ ուսումնառության արդյունքներն իսկապես ձեռք են բերվել: 3. Թափանցիկ, այսինքն՝ ուսանողներին պետք է նախապես հստակ ներկայացվեն լավ/բավարար կատարման չափանիշները և գնահատման գործընթացը: 4. Արդար, այսինքն՝ գնահատման գործընթացը կազմակերպվում է այնպես, որ ուսանողները ստանան իրենց կարողությունները ցուցադրելու համար անհրաժեշտ ժամանակահատված, համապատասխան նյութեր և տեխնիկական միջոցներ: 5. Օբյեկտիվ, այսինքն՝ բոլոր ուսանողները ստանան նույն գնահատականը միևնույն արդյունքները գրանցելու դեպքում:
  Ուսանողների գնահատման այս հինգ չափանիշները պետք է ներառվեն որակի ապահովման չափորոշիչներում, իսկ հաստատությունները՝ պատասխանատվություն կրեն դրանց ապահովման համար: Գնահատմանը ներկայացվող պահանջների մեծ մասը պետք է սահմանվի գնահատման ազգային չափանիշներով՝ հստակեցնելով, օրինակ, թե որ ուսումնառության արդյունքներն են գնահատվում թեստավորման, գործնական առաջադրանքների կամ վերահսկողությամբ իրականացվող գործնական առաջադրանքների միջոցով, ինպես նաև ներառելով բավարար կատարման չափանիշները և այլն:
  Սերբիայում որակավորման չափորոշիչներն ընդգրկում են ոչ միայն ուսումնառության արդյունքները (գիտելիքներ, հմտություններ, կարողություններ և վերաբերմունք), այլև «Ուսումնառության արդյունքների գնահատմում բաժինը, որը սահմանում է ակնկալվող ուսումնառության արդյունքներն ու գնահատման տեսակները՝ հիմնվելով ՄԿՈՒ համակարգում գնահատման ընթացակարգը կարգավորող իրավական և ենթաօրենսդրական կարգավորումների վրա:

- Որակի ապահովման մեխանիզմների միջոցով նպաստել ՄԿՈՒ հաստատությունների ծրագրերի արդիականացմանը և համապատասխանությանը գործատուի պահանջներին: Դրան կարելի է հասնել՝ ծրագրային հավատարմագրման նախապայման դարձնելով մատուցվող ծրագրի արդիականության և համապատասխանության հիմնավորումը, որը ներառում է անհրաժեշտ ոլորտային հմտությունների վերաբերյալ վերլուծություններ և ուսումնասիրություններ: Որակի ապահովման համակարգում ներդնել EQAVET-ի որոշ ցուցիչներ և կիրառել ծրագրային հավատարմագրման կամ պետական ֆինանսավորմանն առնչվող որոշումների կայացման գործընթացին: Առանձնահատուկ ուշադրություն դարձնել հետևյալ ցուցիչներին՝ 05 (ՄԿՈՒ ծրագրերի շրջանավարտների զբաղվածության և հետագա կրթության վերաբերյալ տվյալներ), 06 (Զեռքբերված հմտությունների կիրառման մակարդակն աշխատավայրում), 09 (Աշխատաշուկայում վերապատրաստման կարիքների բացահայտման մեխանիզմներ): Դա կպահանջի վերահսկողական համակարգի ձևավորում ինչպես հաստատությունների, այնպես էլ ազգային մակարդակով: Որակի ապահովման առավել մեծ շեշտադրումը ծրագրերի արդյունավետության վրա կնպաստի ուսումնական նյութերի, ուսուցման մեթոդների, ռեսուրսների ու սարքավորումների բարելավմանը:

- Զարգացնել արտաքին գնահատողների կարողությունները ոլորտային հատուկ հարցերի շրջանակում: Մասնավոր հատվածի ներկայացուցիչների ներգրավվածությունը որակի արտաքին ապահովման գործընթացներին պետք է լինի պարտադիր:

- Թվային տեխնոլոգիաների կիրառմամբ պարզեցնել որակի արտաքին ապահովման գործընթացը՝ դարձնելով այն առավել արդյունավետ և հասանելի:

Լուսանկար. ETF ներկայացուցիչ Նադեժդա Սոլոդյանկինա, ՀՀ ԿԳՄՍ նախարարության նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության վարչության պետ Արմենուհի Պողոսյան, ՈՍԱԿ տնօրեն Ռուբեն Թոփչյան, ՈՍԱԿ-ը գործընկերների արձագանքների վերաբերյալ ամփոփիչ քննարկմանը, 23.05.2024

<u>ՄԿՈՒ զարգացում</u>

- Ամրապնդել և պաշտոնական դաշտ բերել արդյունաբերության և ՄԿՈՒ ոլորտի միջև համագործակցությունը՝ ապահովելով արդյունաբերության տարբեր ոլորտների ներկայացուցիչների մասնակցությունը: Այս միջոցառումը ներառում է մասնագիտական և կրթական չափորոշիչների, այդ թվում՝ գնահատման չափանիշների և որակի չափորոշիչների նախագծում ու մշակում, մասնակցություն որակի ապահովման գործընթացին որպես փորձագետ և որոշում կայացնող մարմիններ, ներգրավվածություն դասավանդման գործընթացին, մասնագիտական զարգացման աջակցություն, սովորողների կարողությունների գնահատում: Այն ընդգրկում է նաև դուալ ծրագրերի իրականացման մոտեցումների բարելավումը և քոլեջներին տրամադրում է որոշակի ժամանակահատվածով և պայմաններով գործառնական կառավարման հնարավորություն, որպեսզի վերջիններս վերածվեն «արդյունաբերության կարիքների հիման վրա կրթություն տրամադրող կենտրոնների»: Այդ նպատակով անհրաժեշտ կլինի բարձրացնել կազմակերպությունների իրազեկվածությունը ՄԿՈՒ հաստատությունների հետ համագործակցության առավելությունների և դրանից բխող պարտականությունների վերաբերյալ, ինչպես նաև իրականացնել կարճաժամկետ վերապատրաստման դասընթացներ՝ խթանելու կազմակերպությունների ներգրավվածությունը համագործակցության տարբեր ուղղություններով: Արդյունաբերության/մասնավոր հատվածի ներգրավվածությունը հնարավոր է ապահովել նաև ոլորտային մոտեցման կիրառմամբ:

- Որակի ապահովման գործընթացները համահունչ դարձնել միջազգային չափորոշիչներին և հավատարմագրման համար դիմել ճանաչված միջազգային կառույցների՝ բարձրացնելու հայաստանյան կրթական հաստատությունների միջազգային ճանաչումը և որակավորումների արժանահավատությունը: Օրինակ՝ որակի ապահովման ազգային համակարգը, մոտեցումները և փորձը համապատասխանեցնել EQAVET շրջափուլին և ցուցիչներին, ինչպես նաև սահմանել և ստեղծել տվյալների հավաքագրման հուսալի համակարգ՝ ապահովելու ցուցիչների ձեռքբերման պատշաճ մշտադիտարկումը: Իրականացնել ազգային որակի ապահովման մանրամասն վերլուծություն ՄԿՈՒ համատեքստում՝ կենտրոնանալով EQAVET-ի ներդրման, դրա ցուցիչների կիրառման և մշտադիտարկման շրջանակի ստեղծման վրա: Հայաստանում EQVET շրջանակը փորձարկելու նպատակով ընտրել 10 ցուցիչներից առնվազն 3-ը: Մշակել որակի ապահովման և ընտրված ցուցիչների թեմայով վերապատրաստման ծրագրեր և ներկայացնել որակի ապահովման պատասխանատու կառույցներին ու ՄԿՈՒ հաստատություններին:

- Ներդնել արդյունավետ մեխանիզմներ՝ ապահովելու ռազմավարական նպատակների իրականացումը, օրինակ՝ մինչև 2030թ. շրջանավարտների մասնագիտական զբաղվածության մակարդակը հասցնել 90%-ի: Դա կպահանջի հաշվի առնել բազմաթիվ գործոններ, որոնք ազդեցություն ունեն ՄԿՈՒ ծրագրերի որակի վրա.

    - Շրջանավարտների զբաղվածության մակարդակը 90%–ի հասցնելու համար անհրաժեշտ է հստակեցնել, թե արդյոք ինքնազբաղվածությունն (սեփական ընկերության հիմնում կամ ընտանեկան բիզնեսի զարգացում և այլն) այս համատեքստում համարվում է զբաղվածություն:
    - Որոշել, թե ինչ մեթոդաբանություն պետք է կիրառվի զբաղվածության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման համար:
    - Ձեռք բերել մասնավոր հատվածի վստահությունը մատուցվող նյութերի բովանդակության և ուսուցման որակի նկատմամբ: Մասնավոր հատվածի մասնակցությամբ ուսումնական պլանների վերանայումը, պլաններն ավելի ճկուն դարձնելը՝ թույլ տալով կազմակերպություններին ներառել իրենց կարիքները և առանձնահատկությունները ուսումնական գործընթացում, առավել պրակտիկ ուղղվածությամբ կրթությունը, ուսանողների՝ գործատուի միջավայրում ավելի շատ ժամանակ անցկացնելու հնարավորությունը և տարբեր կազմակերպություններ այցերի ու դուալ կրթական ծրագրերի քանակի

ավելացումը, մասնավոր հատվածի ներկայացուցիչների ներգրավումը ուսանողների գնահատման և որակավորումների շնորհման գործընթացին կնպաստեն վստահության աճին և կբարձրացնեն զբաղվածության մակարդակը: ՄԿՈՒ դիպլոմը պետք է լինի որակյալ աշխատուժի և շրջանավարտների 90%-ի զբաղվածության երաշխիքը:

- Ազգային/համակարգային մակարդակով պետք է առաջնահերթություն տրվի ՄԿՈՒ հաստատություններում ենթակառուցվածքների ու սարքավորումների բարելավմանը և ՄԿՈՒ ծրագրերի համապատասխանեցմանը ժամանակակից տեխնոլոգիական առաջընթացով պայմանավորված համաշխարհային հմտությունների պահանջներին:
- Խթանել ՄԿՈՒ հաստատությունների միջազգայնացումը, այդ թվում՝ միջազգային փոխանակման ծրագրերի իրականացումը՝ նպաստելով կրթական փորձի հարստացմանը անհատական և ինստիտուցիոնալ մակարդակով:
- Խթանել նորարարությունը՝ կիրառելով խրախուսման մեխանիզմներ և տրամադրելով դրամաշնորհներ ու ֆինանսական աջակցության նորարարական ուսուցման և ուսումնական նախագծերի իրագործման համար:
-

Լուսանկարներ. 1-2՝ ազգային շահակիցները գործընկերներից ստացված արձագանքների քննարկմանը և ՈԱԱԿ տնօրեն Ռուբեն Թոփչյան, 23.05.2024

Գործընկերային այց – փուլ չորրորդ, բարելավում

Այցի վերջին փուլում կարևորվում է գործընկերների արձագանքների կիրառումը՝ ապահովելու հյուրընկալող երկրում բարելավումների իրականացումը: Հյուրընկալող հաստատությանը խորհուրդ է տրվում վերլուծել գործընկերների արձագանքը՝ անհրաժեշտության դեպքում այն տրամադրելով համապատասխան շահակիցներին: Միևնույն ժամանակ գործընկերներին խրախուսվում է դիտարկել, թե որքանով և ինչպես կարող են իրենց երկրներում ներդնել այցի ընթացքում նկատված լավագույն փորձերը:

Գործընկերային այցի մեթոդաբանություն – փուլ 4 – բարելավում

Ներգրավված դերակատարների համար կարևորությունը

<u>Հյուրընկալող կողմ</u>

- հնարավորություն ստանալ՝ մասնակցելու գործընկերների արձագանքների վերաբերյալ ազգային մակարդակով իրականացվող քննարկումների և մշակելու ազգային պլան՝ որակի ապահովման գնահատման ենթակա ոլորտում բարելավումների իրականացման համար:

<u>Գործընկեր գնահատողներ</u>

- ստանալ հնարավորություն՝ տարածելու ազգային շահակիցների շրջանում դիտարկած և քննարկած լավագույն փորձերը,
- ստանալ լավագույն փորձերը սեփական երկրում ներդնելու հնարավորություն:

Բարելավման փուլի շրջանակում ETF մեթոդաբանությունն առաջարկում է մի շարք ուղղորդումներ՝ արձագանքների քննարկում համապատասխան շահակիցների հետ, դրանց կիրառման վերաբերյալ որոշումների կայացում, գործողությունների պլանի ստեղծում և վերջինիս իրականացմանն ուղղված պարտականությունների սահմանում:

Ազգային համատեքստը ներկայացնող զեկույցում ՈԱԱԿ-ը նշել է, որ այցից ստացված արձագանքների կիրառման և/կամ բարելավման ուղղությամբ գործընկերների տրամադրած հետադարձ կապը պետք է թույլ տա գործակալությանը.

- վերլուծել և քննարկել գործընկերների կողմից ստացված անհատական և համատեղ արձագանքներն ու խորհրդատվությունները,
- ազգային համատեքստին համապատասխան խորհրդատվությունները ներառել աշխատանքային պլանում,
- տեղեկացնել շահակիցներին ստացված արձագանքների մասին՝ զեկույցը հրապարակելով կայքում և տարածելով էլ. փոստով ու սոցիալական ցանցերի միջոցով,
- խորհրդատվությունները կիրառել որպես հիմք՝ ձևավորող գնահատման ճանապարհային քարտեզը մշակելու և կառավարության հաստատմանը ներկայացնելու համար:

Գործընկերային այցն ավարտվել է ֆորումի ներկայացուցիչների միջև կարծիքների փոխանակմամբ և վերլուծությունների քննարկմամբ: Բոլորն այցը դրական են գնահատել և դիտարկել որպես փոխադարձ ուսուցման հնարավորություն: Ներկայացվել են հետագա գործընկերային այցերի կազմակերպմանն ուղղված մի շարք առաջարկներ.

- ՄԿՈՒ համակարգի բոլոր հիմնական դերակատարների ներգրավումը գործընկերային այցի քննարկումներին լավ փորձ է: Այնուամենայնիվ, խմբերում ընդգրկված գործընկերների թիվը կարելի է կրճատել՝ յուրաքանչյուրին տեսակետն արտահայտելու ավելի շատ ժամանակ տրամադրելու նպատակով:
- Նախքան գործընկերային այցի մեկնարկն անհրաժեշտ է արտաքին գործընկերներին ժամանակ տրամադրել, որպեսզի Ազգային համատեքստը ներկայացնող զեկույցի վերաբերյալ պատրաստեն համատեղ վարկած՝ այդպիսով ապահովելով միասնական դիրքորոշում այն հարցերի շուրջ, որոնք պետք է ուղղվեն պանելային քննարկումներին մասնակցող ազգային շահակիցներին:
- Այցի տարբեր փուլերում գործընկերներին տրվող հարցերը պետք է միշտ կենտրոնացած լինեն այն թեմայի և գնահատման հարցերի վրա, որոնք նշված են հյուրընկալող հաստատության տրամադրած Ազգային համատեքստը ներկայացնող զեկույցում:
- Կարևոր է մշտապես առաջնորդվել ՈԱ ֆորումի գործընկերային այցերի մեթոդաբանության սկզբունքներով. գործընկերների նպատակը ոչ թե հյուրընկալող երկրի համակարգում թերություններ հայտնաբերելն է, այլ կարծիքներ փոխանակելը:

ՈԱԱԿ-ը շնորհակալություն է հայտնել բոլոր մասնակից գործընկերներին՝ կրթության որակի ապահովման շարունակական բարելավման գործում ցուցաբերած պրոֆեսիոնալիզմի և փորձառության համար:

Լուսանկար՝ խմբակային լուսանկար, 21.05.2024

Մասնակիցների ցանկ

ETF ֆորումի անդամներ

Ալբանիա	**Էլվիս Գիշտի**, Միջին մասնագիտական կրթության և ուսուցման և որակավորումների ազգային գործակալության գլխավոր տնօրեն, **Դիանա Ջելիլի,** Միջին մասնագիտական կրթության, ուսուցման և որակավորումների ազգային գործակալության,
Իսրայել	**Յարոն Դոպելտ**, Կրթության նախարարության ներկայացուցիչ, դոկտոր,
Կոսովո3	**Արբեր Սալիհու**, Ազգային որակավորման գործակալության ղեկավար,
Իսրայել	**Յարոն Դոպելտ**, Կրթության նախարարության ներկայացուցիչ, դոկտոր,
Հայաստան	**Ռուբեն Թոփչյան,** «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (ՈԱԱԿ) տնօրեն, **Անահիտ Տերտերյան**, ՈԱԱԿ ինստիտուցիոնալ և ծրագրային փորձաքննության բաժնի մասնագետ,
Հյուսիսային Մակեդոնիա	**Գորան Սպասովսկի**, Մասնագիտական կրթության և ուսուցման կենտրոնի միջազգային համագործակցության պլանավորման և իրականացման հարցերով խորհրդական,
Հորդանան	**Մոհամմադ Թահսին Ալի Ալնաուայսե**, Տեխնիկական և մասնագիտական հմտությունների զարգացման բաժնի որակի ապահովման ղեկավար,
Մոնտենեգրո	**Վլադիսլավ Կոպրիվիցա**, ՄԿՈՒ ազգային կենտրոնի ներկայացուցիչ,
Սերբիա	**Կասլավ Միտրովիչ**, Որակավորման գործակալության տնօրեն, **Իվանա Ցվորովիք Պլավզիք**, Որակավորման գործակալության տնօրենի տեղակալ,
Վրաստան	**Կախաբեր Էրաձե,** Վրաստանի կրթության որակի զարգացման ազգային կենտրոնի ՄԿՈՒ ծրագրերի ղեկավար, **Քեթեվան Չիշխելի**, Վրաստանի կրթության որակի զարգացման ազգային կենտրոնի ՄԿՈՒ որակի ապահովման բաժնի տնօրենի տեղակալ:

Եվրոպական կրթական հիմնադրամ (ETF)

Մունիր Բաատի - Մարդկային ռեսուրսների զարգացման ավագ մասնագետ, ՄԿՈՒ քաղաքականությունների մասնագետ, Հորդանանի և Լիբիայի ՄԿՈՒ որակի ապահովման կոնտակտային անձ,

[3] Մասնակցությունը չի հակասում կարգավիճակի վերաբերյալ դիրքորոշումներին և համապատասխանում է Կոսովոյի անկախության հռչակման վերաբերյալ ՄԱԿ-ի ԱԽ 1244/1999 և ԱՄԴ կարծիքին:

Նադեժդա Սոլոդյանկինա - Մարդկային ռեսուրսների զարգացման մասնագետ, Տաջիկստանի կոնտակտային անձ,

Լիա Կարլոպ – նախագծերի ղեկավար

Ազգային շահակիցներ Հայաստանից

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն – Արաքսիա Սվաջյան, նախարարի տեղակալ, Արմենուհի Պողոսյան, Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության վարչության պետ,

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն - Ժորա Սարգսյան, Աշխատանքի և զբաղվածության վարչության պետ, Ռուզաննա Պեպանյան, Զբաղվածության բաժնի պետ**,**

ՀՀ էկոնոմիկայի նախարարություն - Մանե Խալաթյան, Գիտելիքահենք տնտեսության վարչության ավագ մասնագետ,

Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային կենտրոն – Տաթևիկ Գասպարյան, տնօրեն ,

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամ (ՈԱԱԿ) –Ռուբեն Թոփչյան, տնօրեն, Անահիտ Տերտերյան, Վարդուհի Գյուլազյան, Անահիտ Ութմազյան, Մերի Բարսեղյան, Լիանա Ալավերդյան, Հայկուհի Բարսեղյան, Ելենա Հարությունյան,

ՈԱԱԿ հավատարմագրման հանձնաժողով – Լուիզա Միլիտոսյան, անդամ,

Եվրոպական միության պատվիրակություն Հայաստանում – Դավիթ Ավագյան,

Էջմիածնի պետական քոլեջ – Մարիամ Հովհաննիսյան, որակի ներքին ապահովման պատասխանատու,

Հայաստանի Եվրոպական համալսարան – Արմենուհի Միերյան, Ֆինանսների ամբիոնի վարիչ**,**

Ֆրանս-հայկական մասնագիտական ուսումնական կենտրոն – Ելենա Մարտիրոսյան, տնօրենի տեղակալ,

«Պրոգրես» համալսարանի բժշկական քոլեջ – Սարգիս Կարապետյան, դասախոս–գործատու,

Գյումրու N4 Արհեստագործական պետական քոլեջ – Անուշ Մկրտչյան, փոխտնօրեն, Վլադիմիր Բագրատունի, դասախոս–գործատու,

Լոռու տարածաշրջանային պետական քոլեջ – Արմինե Մելիքսեթյան, դասախոս,

Մարտունու պետական բժշկական քոլեջ – Լուսինե Գալոյան, կրթական ծրագրի ղեկավար,

Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան – Լարիսա Ավետիսյան, պրոռեկտոր,

Երևանի հենակետային բժշկական քոլեջ – Մերի Սարգսյան, տնօրենի տեղակալ, Արամ Հակոբյան, ուսանող, Լուսիկ Մանուչարյան, կարիերայի պատասխանատու,

Երևանի պետական հումանիտար քոլեջ – Մարինե Հակոբյան, տնօրենի ներկայացուցիչ,

Մեհրաբյանի անվան բժշկական քոլեջ – Վահե Բաբայան, տնօրեն,

Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջ – Ռոբերտ Աբրահամյան, տնօրեն, Քաջիկ Ավետիսյան, դասախոս, Աշոտ Ավետիսյան, կրթական ծրագրի ղեկավար,

Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջ – Քրիստինե Հակոբյան, տնօրենի տեղակալ, Լիլիթ Աբելյան, որակի ներքին ապահովման պատասխանատու,

Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան – Ասյա Սիմոնյան, դասախոս,

Երևանի Ն. Աճեմյանի անվան տարածաշրջանային N 2 պետական քոլեջ – Լիանա Ամիրխանյան, Կարիերայի պատասխանատու,

Սևանի բազմագործառութային պետական քոլեջ – Հասմիկ Մաթեվոսյան, փոխտնօրեն,

Փ. Թերլեմեզյանի անվան գեղարվեստի պետական քոլեջ – Արմինե Հարությունյան, դասախոս-գործատու,

Վանաձորի պետական բժշկական քոլեջ – Դավիթ Շահվերդյան, դասախոս–գործատու,

Տեսվան SS ընկերություն – Դավիթ Գրիգորյան, տնօրեն,

Ֆերտի բարեգործական կենտրոնի տնօրեն – Խաչիկ Սահակյան, տնօրեն,

«Ալեքս Տեքստիլ» ընկերություն – Ժորա Մովսիսյան, համահիմնադիր,

Միքայելյան վիրաբուժության ինստիտուտ – Գեղանուշ Ստեփանյան, ավագ բուժքույր,

«Մարի» տուրիստական գործակալություն – Սոնա Եղիազարյան, մասնագետ,

Լրացուցիչ տեղեկատվության համար կարող եք դիմել ETF որակի ապահովման թիմին՝ Մունիր Բաատիին (Mounir.Baati@etf.europa.eu) և Նադեժդա Սոլոդյանկինային (Nadezda.Solodjankina@etf.europa.eu):

www.etf.europa.eu
www.twitter.com/etfeuropa
www.youtube.com/user/etfeuropa
www.facebook.com/etfeuropainfo@etf.europa.eu